Մեզ հետ խոսում են ոչ թե իրենց տապալումների մասին, այլ՝ այն հարցերի մասին, որոնք առկա են երկրում. եկեք չմոռանանք, որ այս մարդը 2018 -ին իշխանության է եկել մարդկանց սոցիալական խնդիրները լուծելու խոստումներով, այլ հարց է, որ նա լուծեց Ադրբեջանի պետական կարեւորագույն խնդիրը՝ հանձնելով Արցախն Ալիեւին:

Կարդացեք՝ էջ 4

«Երաշխավորված խաղաղության» գաղափարն առաջ մղելու համար անհրաժեշտ է պարզաբանել՝ ով, ինչպես, ինչ մանդատով է իրականացնելու հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի մոնիթորինգը, մասնավորապես դիտորդներին եւ սահմանի վերահսկումը, խախտումների արձանագրման ընթացակարգերի, փաստերի անկախ վերիֆիկացիան:

Կարդացեք՝ էջ 5



Եթե Համլետ Պետրոսյանը, Լեռնիկ Հովհաննիսյանը, Արտակ Բեգլարյանը եւ մյուսները, որոնք պետություն չեն ներկայացնում, այս ջանքերը չթափեն, կստացվի, որ մենք լուռ ենք: Իսկ դա բացարձակապես անընդունելի է, որովհետեւ այդքան խոսում ենք խաղաղության մասին, բայց չենք քննարկում մշակութային ժառանգության խնդիրը:

Կարդացեք՝ էջ 7

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 30 (4165), 3 մարտ, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Մարտի 1-ին ՔՊ-ականների մարզային այցի, իրականում՝ նախընտրական քարոզարշավի ժամանակ Իջեւանի բնակիչ, նախկին զինվորական Անդրանիկ Դովլաթբեկյանը, լսելով Փաշինյանի արձագանքը, որ «արգելում է» նրա աղջկան Գանձաքարի մանկապարտեզի տնօրեն նշանակել, սպառնաց. «Գանձաքարում «լավ» կլի ձեր ընտրությունը», ինչին Փաշինյանը հակադարձեց. «Գանձաքարում վերջին տասնյակ տարիներին տասնյակ միլիարդների ներդրում ենք արել, էդ ամենի արդյունքում Գանձաքարում վատ պտի լինի՝ թող վատ լինի, գանձաքարցիների ցավն էլ տանեմ, թող վատ ըլնի»: Իրականում, Փաշինյանի համար հունիսի 7-ի ընտրությունները լավ չեն լինելու ոչ միայն Դովլաթբեկյանի աղջկա պատճառով: Բանն այն է, որ Սամվել Կարապետյանի մայրը՝ Մարիա Կարապետյանը, ծնունդով Գանձաքարից է, եւ այստեղ իրենց հայրենակից Սամվել Կարապետյանին սիրում են: Ինչ վերաբերում է «տասնյակ միլիարդների ներդրումներին», գյուղում տարակուսած են այդ ստից:

Զրման Թաթոյանի «Միասնության թեւերի» հետ համապետական ընտրությունների գնացող «Շանթ» դաշինքի անդամ, Կապանի քաղաքապետ Գեւորգ Փարսյանը մտերիմներին ասել է, որ ինքն անձամբ չի լինի նախընտրական ցուցակում, իր տեղակալ Գոռ Թադեւոսյանը կլինի առաջին տասնյակում: Կապանցիներն ասում են, որ Փարսյանը երեւի չի ուզում սրել հարաբերություններն իշխանության հետ եւ իր վարկանիշը հարվածի տակ դնել, եթե դաշինքը Կապանում շատ ձայն չտանի: Չնայած Փարսյանը մեծ կազմով ներկա է գտնվել շաբաթ օրը «Միասնության թեւերի» հավաքին: Ինչ վերաբերում է Գոռ Թադեւոսյանին, ապա նա անկուսակցական է, ավագանու անդամ է դարձել «Շանթ դաշինքի» ցուցակով, ժամանակին եղել է Սյունիքի մարզպետի տեղակալ, երբ մարզպետը ԲՀԿ-ական Կարեն Համբարձումյանն էր:

Խաչատուր Սուքիասյանը, ԱԺ նախագահի կարգադրությամբ, մարտի 2-9-ը գտնվելու է չվճարվող արձակուրդում: Երեկ խոսում էին, որ գործարարն այս օրերին Դուբայում է եւ, պատերազմով պայմանավորված, չի կարողանում դուրս գալ երկրի տարածքից, ինչպես մեր շատ հայրենակիցներ: Ուշագրավ է, որ փետրվարին էլ Սուքիասյանն իր հաշվին արձակուրդ էր մեկնել՝ փետրվարի 9-17-ը: Ըստ ամենայնի՝ հաջորդ խորհրդարանում չառաջադրված պատգամավորը որոշել է ամբողջությամբ վերադառնալ բիզնես գործունեության եւ այս փուլից սկսած՝ արդեն սկսել է դրանով զբաղվել:

Պարզ ճշմարտություն

Իհարկե, բացարձակ ճշմարտություններ բնության մեջ չկան, եւ ամեն ինչ համեմատության մեջ է բացահայտվում: Բայց կան տարրական սկզբունքներ ու արժեքներ, որոնք միշտ՝ բոլոր ժամանակներում եւ ցանկացած պարագայում, ճշմարիտ են: Անկախ նրանից, թե ինչպես ենք վերաբերվում Ռուսաստանին, փաստ է, որ ռուս-ուկրաինական պատերազմը Ռուսաստանն է սկսել, ռուսական զորքն է ներխուժել ուկրաինական տարածք: Եվ, անկախ նրանից, թե ինչպես ենք վերաբերվում ԱՄՆ-ին ու Իսրայելին, փաստ է, որ նրանք, իրավունք չունենալով, միջամտել են Վենեսուելայի եւ Իրանի ներքին կյանքին: Մի քանի տարի առաջ անպատկերացնելի կլիներ, որ կարող են ոչնչացնել ու կալանավորել այդ ժողովուրդների ընտրած իշխանություններին: Պարզ է, որ այդ գործողությունները Եւ Ռուսաստանը, Եւ ԱՄՆ-ն ինչ-որ կերպ բացատրում են: Մանիպուլյատիվ մեկնաբանություններ տալը, իրադարձությունները ցանկացած տեսանկյունից ներկայացնելը բարդ բան չեն: Եթե Նիկոլ Փաշինյանն է դա բաշարում, նման հզոր պետություններ կբաշարեն ու կբաշարեն: Առհասարակ, մարդկային խելքը ոչ այնքան բարի գործեր անելուն է ծառայում, որքան չար գործերն արդարացնելուն: Չէ՞ որ անգամ սերիական մարդասպաններն իրենց գործողություններն արդարացնելու միջոցներ գտնում են, այլ բան է, որ այդ արդարացումները ողջամիտ մարդկանց վրա ազդեցություն չեն գործում: Ասենք, ինչ բացատրություն կարող է լինել Իրանի Մինաբա քաղաքում աղջիկների դպրոցի ռմբակոծումը, եւ ինչը կարող է արդարացնել 150-ի չափ երեխաների զոհվելը: Ինչպես ոչ մի արդարացում չունի ուկրաինական Բուչա քաղաքի զոհերի փաստը: Եվ այս ամենի դատապարտումը ոչ մի կապ չունի աշխարհաքաղաքական կողմնորոշման, քաղաքական համակրանքների հետ: Սա պարզ մարդկային կարեկցանքի եւ պատերազմը, որպես այդպիսին, մերժելու դիրքորոշում է:

ՔՊ ներկուսակցական ընտրությունների 2-րդ փուլը կմեկնարկի այս ամսվա վերջին. մարտի 28-29-ը կուսակցության Երեւանի կենտրոնական գրասենյակում նույն սկզբունքով՝ ավելի քան 1000 պատվիրակներ կընտրեն առաջին փուլով անցած առաջին 50 թեկնածուին եւ կորոշեն վարչապետի թեկնածուին, չնայած բոլորը գիտեն, որ որոշելու բան չկա: Մինչ այդ 50 թեկնածուները միասին իբրեւ թե մարզային կառույցներ են մեկնում՝ քարոզարշավի: Անցած շաբաթ-կիրակի մեկնարկը տվել են. 2-ական մարզ են այցելել, որտեղ հավաքում են տարածքային կառույցների անդամ-ընտրիչներին եւ հատ-հատ ներկայացնում իրենց կենսագրությունը, անցած ճանապարհը, իրենց մասին պատմող տեսահոլովակներ են միացնում եւ համոզում, թե ինչու հենց իրենց պետք է ընտրեն: Իսկ իրականում, հունիսի 7-ի ընտրությունների քարոզարշավի մեկնարկն են տվել. մեկնում են մարզեր՝ քաղաքացիների հետ հանդիպելու:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՌԻՎ

Նիկոլ Փաշինյանի եւ Աննա Հակոբյանի ամուսնալուծության վերաբերյալ այս օրերին բազում վարկածներ շրջանառվեցին: Դրանք համադրելով՝ մենք հետեւյալ պատկերը ստացանք. դեռ տարիներ առաջ՝ 2019-20 թվականներին, նրանց հարաբերությունները մի փուլ խիստ վատացել էին, եւ մոտ մեկ տարի կամ ավելի, նրանք իրար հետ չէին «ապրում», սակայն այդ ճգնաժամը երկուստեք ջանքերով հաջողվել է հաղթահարել, բայց վիճակը կրկին սրվել է 2025-ի կեսերին: Աննա Հակոբյանի՝ Չինաստանում ուսանելու ծրագիրն էլ այդ ճգնաժամի հետեւանք էր, սակայն մեկնելը «չի փրկել» ամուսնությունը: Այն, որ կինը տեւական ժամանակ ամուսնու կողքին չէր, եւս վկայում է լարված հարաբերությունների մասին: Չնայած մի քանի փորձ արել են՝ ցույց տալու, որ ամեն ինչ նորմալ է: Իսկ 25-ի վերջին կոնֆլիկտը սրվել է: Այս վերջին 3 ամիսներին, ըստ որոշ լուրերի, Փաշինյանն Աննա Հակոբյանին «աքսորել» էր Սեւանի կառավարական ամառանոց եւ, ըստ այդ լուրերի, արգելել իր թիկունքում որեւէ քայլ կատարել: Ենթադրում ենք, որ նրա իշխանությունն ինչ-որ պահի ամուսնու իշխանությունից մեծ է եղել, եւ նա փորձել է կառավարման լծակներն իր ձեռքը վերցնել, ինչը դուր չի եկել ամուսնուն: Ըստ ամենայնի, վերջինս նաեւ գիտակցել է, որ նախընտրական փուլում կնոջ ակտիվությունը կարող է վնասել իրենց վերարտադրությանը, եւ փորձել է պասիվացնել նրան: Սակայն վիրավորված տիկինը որոշել է, որ դա իր իրավունքների ոտնահարում է, եւ վճռել է յուրովի «պատժել» ամուսնուն՝ նրա հեղինակությանն անդառնալի հարված հասցնելով:

ԵԿԵՂԵՑԻ

«Դրապարակի» զրուցակիցը **Արտաշես սարկավագ Աջապահյանն** է:

- Նիկոլ Փաշինյանն ու իր շրջիկ պատարագասերների խումբն ամեն կիրակի պատարագների էին մասնակցում եւ հանկարծ որոշեցին պատարագը փոխարինել «պերաշկի եւ կուկուռուզ» փարթիներով, սիրային դրամայով ու մարզեր կատարած այցերով: Այն դեպքում, որ կիրակի օրը մարտի 1-ն էր, եւ շատ ավելի կսազեր, որ այդ օրը զոհերի հիշատակին պատարագի մասնակցեին: Ի՞նչ եք կարծում՝ Փաշինյանը հե՞տ է կանգնել Եկեղեցին գրոհելու իր դավադիր ծրագրից:

- Հավանաբար, ընտրություններին են պատրաստվում, պերաշկի են ուտում, որպեսզի ժողովրդին հավատացնեն, թե իրենք էլ են պերաշկի ուտում, միլիարդների պարգեւավճարներ են ստանում եւ այդ պարգեւավճարներով պերաշկի են առնում, այ, այդքան «ազնիվ» ու «պարկեշտ» տղաներ են իրենք.... եռակին հավաքված է յուրաքանչյուր եկեղեցում: Այս է պատճառը, որ Փաշինյանը կանգ է առել, գիտակցում է, որ այդ պրոցեսներն իրեն խանգարելու են առաջիկա ընտրություններում: Սակայն, Աստված մի արասցե, եթե նա մնա իշխանության, նոր ուժերով է գրոհելու Եկեղեցու եւ ոչ միայն Եկեղեցու, այլեւ բոլոր ազգային արժեքների վրա:

- Բայց եթե ժողովրդի աջակցությունը չունեն, ի՞նչ կարող են անել:

- Ինչի՞ համար է դիկտատուրան կոչվում դիկտատուրա, հենց նրա համար, որ չկա ժողովրդի կողմից որեւէ աջակցություն, սակայն մեկ անձն իր կամքն է բոլորին թելադրում: Դիկտատուրան չի լինում ժողովրդի աջակցությամբ: Սկզբում դիկտատորները գալիս են ժողովրդի աջակցությամբ՝ թաքցնելով իրենց իրական դեմքը, իսկ հետո դուրս են գալիս հենց նույն ժողովրդի դեմ: Այս մարդը, չունենալով ժողովրդի աջակցությունը, ամեն գնով փորձում է իշխանությունը պահել:

- Բայց եթե նրան չհաջողվեց Եկեղեցու դեմ պայքարում հասնել անգամ չնչին հաջողության, ի՞նչ եք կարծում՝ կհամարձակվի՞ նորից Եկեղեցու դեմ դուրս գալ:

- Մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը սատանան իր պարտությունը չի ընդունելու: Նա սատանայի մի մասն է, իր հոգին ծախել է սատանային: Նա սատանայի առաջարկներն ընդունել է, այդ պատճառով էլ դուրս է եկել Աստծո ծառաների դեմ եւ խոսում է բարեփոխումների մասին: Սատանան միշտ էլ բարի դեմքով է հայտնվում, երբեք պոզով-պոչով չի լինում, իսկ նպատակը մարդկանց խաբելն է: Նա բոլորին խաբում է, ընդունելի կերպար է փորձում փախավ վախկոտ սրիկայի նման, իսկ ժողովուրդը մնաց մենակ ու անօգնական: Այդ ամենի միակ պատասխանատուն հենց ինքն է, նա է բռնության քարոզ արել եւ իր պատիժը չի կրել ըստ արժանվույն, դրա համար էլ այսպես երես է առել եւ մտածում է, թե իրեն ամեն ինչ կարելի է:

- Բայց եթե նրան չհաջողվեց Եկեղեցու դեմ պայքարում հասնել անգամ չնչին հաջողության, ի՞նչ եք կարծում՝ կհամարձակվի՞ նորից Եկեղեցու դեմ դուրս գալ:

- Մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուստը սատանան իր պարտությունը չի ընդունելու: Նա սատանայի մի մասն է, իր հոգին ծախել է սատանային: Նա սատանայի առաջարկներն ընդունել է, այդ պատճառով էլ դուրս է եկել Աստծո ծառաների դեմ եւ խոսում է բարեփոխումների մասին: Սատանան միշտ էլ բարի դեմքով է հայտնվում, երբեք պոզով-պոչով չի լինում, իսկ նպատակը մարդկանց խաբելն է: Նա բոլորին խաբում է, ընդունելի կերպար է փորձում ստեղծել, սակայն մարդկության պատմությունը վկայում է, որ բոլոր հեղափոխությունները եկել են բարի նպատակների քողի տակ ու վերածվել չարիքի: Նա էլ եկավ լավ ապագայի խոստումներով, սակայն հայ ժողովրդի գլխին դարձավ պատուհաս: Օրինակ՝ Հիտլերն ի՞նչ լոզունգներով եկավ իշխանության, ի՞նչ լոզունգներով եկան բոլշեւիկները, կոմունիստները եւ հետո ի՞նչ արեցին.... սատանան միշտ էլ Եկեղեցու դեմ պայքարելու է, մենք չպետք է մեր զգոնությունը կորցնենք: Նրանք ոչ մի կերպ իրենց նպատակներից հետ չեն կանգնելու, ուղղակի հիմա այլ առաջնային խնդիրներ ունեն, օրինակ՝ իշխանությունը պահելու խնդիր, ինչից հետո իրենց չարագործությունները հասցնելու են նպատակին: Իհարկե, ոչինչ չի հաջողվելու նրանց, որովհետեւ սատանան չի կարող հաղթել Աստծուն:

- Բայց Եկեղեցին նույն տիրադավներին պարբերաբար դարձի գալու կոչեր է անում, հնարավո՞ր է մի օր էլ Փաշինյանին ներեն:

- Եթե մարդն իրոք զղջում է, հասկանում է իր սխալի խորությունը, ապա Եկեղեցին անպայման ներում է, բայց տեսնելով այս մարդու ունակությունները, քայլերը՝ ես գրեթե վստահ եմ, որ նա երբեք չի կարող զղջալ, զղջալու համար էլ մարդուն որոշակի ինտելեկտ է պետք, հոգեւոր արժեքներ, սակայն այդ ամենը ես չեմ տեսնում այս մարդու մեջ: Նա ավելի շատ Հուդայի ճակատագրին կարող է արժանանալ՝ կործանվել ու կորչել: Ինձ համար նախընտրելի է, որ մարդը դարձի գա՝ իր փոքր ձագերի հետ միասին, որոնք փոքր դեւերի են վերածվել: Եկեղեցին աստվածային կառույց է, ներում է բոլոր նրանց, ովքեր ունեն հոգեւոր հասունություն, սակայն, իմ կարծիքով, նրանք չունեն այդ հասունությունը, իսկ եթե մի օր զղջան էլ, ապա դա անելու են իրենց խղճուկ գոյությունը պահելու համար, ինչն իրական զղջում չէ, այն պետք է լինի հոգու խորքից, այլ ոչ թե խղճուկ գոյությունը փրկելու համար:

ՀԻՏԼԵՐԸ, ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐՆ Ի՞ՆՉ ԼՈԶՈՒՆԳՆԵՐՈՎ ԵԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏՈ Ի՞ՆՉ ԱՐԵՑԻՆ

ինչ վերաբերում է պատարագներին, ապա ամեն ինչ հստակ է. իշխանությունը հասկացել է, որ չի կարողանում մարդ հավաքել, միեւնույն ժամանակ քարոզարշավի հետ կապված հարցեր ունեն, չեն կարող երկուստեք մարդ հավաքել ու իմիտացիա ստեղծել: Հայ ժողովուրդն իր վերաբերմունքը ցույց տվեց, Փաշինյանն իր աչքով տեսավ, որ ողջ պետական ռեսուրսով չի կարողանում մի եկեղեցի մարդ հավաքել, մինչդեռ իր հավաքած բազմության

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

- Ինչո՞ւ եկեղեցում անգամ մարտի 1-ի զոհերի հիշատակը չհարգեցին, հարմար առիթ չէ՞ր՝ վերքը թարմացնելու, նախկինների դեմ խոսելու.... իսկ իշխանությունը սիրում է խաղալ մարդկանց վերքերի հետ:

- Մարտի 1-ն իրենց սարքածն էր: Մարդկանց հանեցին փողոց, հրահրեցին, կան տեսանյութեր, թե ինչպես է հենց այդ մարդը լրբացած բղավում՝ հարձակվեք, ջարդեք, էս արեք, էն արեք, եւ ինքը թողեց

ԳԱՆՁԱՔԱՐՈՒՄ ՄԻԼԻԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ ՉԻ ԱՐՎԵԼ, ՎԱՐՉԱՊԵՏՆ ԷԼ ՆՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԻ

Համացանցում մեծ արձագանք է գտել մարտի 1-ի այն տեսանյութը, որտեղ երեւում է, թե ինչպես է Գանձաքարի բնակիչ, նախկին զինծառայող Անդրանիկ Դովլաթբեկյանն Իջեւանում մոտենում վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու դժգոհում, որ «լենինականցի» Արմինե Հարությունյանը, որը, նրա խոսքերով, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի ընտանիքում է մեծացել, նշանակվել է Գանձաքարի մանկապարտեզի տնօրեն: Դովլաթբեկյանը դժգոհում է, որ «կողքից մեկին» նշանակել են մանկապարտեզի տնօրեն, մինչդեռ իր աղջիկը 13 տարի աշխատում է այդ մանկապարտեզում, սիրված է կոլեկտիվի կողմից, սիրում է իր աշխատանքը, սկայն չի նշանակվում: Թվում է, թե Փաշինյանը պետք է զայրանար, որ մարզպետը չարաշահում է իր դիրքը, բայց վրդովվում է իրեն մոտեցած քաղաքացու ասածից. «Ի՞նչ է նշանակում՝ կողքից մեկին, կարող մ՞ մանկապարտեզը սեփականություն ա»: Դովլաթբեկյանը վարչապետին խնդրում է «հարցին լուծում տալ»: Եվ վարչապետը որոշում է «լուծում տալ»՝ արգելել նրա դստերն այդ պաշտոնին նշանակել: Մինչդեռ, եթե օրենքն արգելում է նրան միջամտել այդ պաշտոնի նշանակմանը, նույն խստությամբ արգելում է նաեւ «նշանակմանն արգելելը»:

Իսկ խնդրի նախապատմությունը հետեւյալն է. Իջեւանի համայնքապետարանից տեղեկացանք, որ Գանձաքարի մանկապարտեզի տնօրենը կենսաթոշակառու է եղել: Երեւանից ստուգումներ են եկել, արձանագրել այդ փաստը: Համայնքապետարանը կենսաթոշակառու տնօրենին պատվով, շնորհակալագրով տուն է ուղարկել, որից հետո մանկապարտեզի փոխտնօրեն Ալլա Դովլաթբեկյանը նշանակվել է տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Համայնքապետարանը, սահմանված կարգով, մանկապարտեզի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ է հայտարարել, որին մասնակցել է 2 թեկնածու՝ Ալլա Դովլաթբեկյանը եւ Արմինե Հարությունյանը՝ մարզպետի «մարդը»: Փետրվարի 24-ին կայացած մրցույթի արդյունքում երկու թեկնածուն էլ հավասար միավորներ են ստացել, երկուսն էլ ճանաչվել են հաղթող: Համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում պետք է նրանցից մեկին նշանակեր մանկապարտեզի տնօրեն, եւ փետրվարի 27-ին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանն Արմինե Հարությունյանին նշանակել է Գանձաքարի մանկապարտեզի տնօրեն: Համայնքապետարանից հայտնեցին, որ մրցույթի ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ բողոքներ չեն եղել: Ի դեպ, Արմինե Հարությունյանը Գանձաքարի միջնակարգ դպրոցում 5 դասաժամ շախմատ է դասավանդում: Գանձաքարի դպրոցի տնօրեն Անուշ Մեհրաբյանը հայտնեց, որ օրենքը մանկապարտեզի տնօրենին, ինչպես նաեւ իրեն՝ դպրոցի տնօրենին, թույլ է տալիս տնօրենի աշխատանքին զուգահեռ 8 դասաժամ պարապել, Արմինեն կորոշի՝ համատեղությամբ շախմատ դասավանդե՞լ, թե՞ ոչ: Իսկ Անդրանիկ Դովլաթբեկյանը, մտածելով, որ իրենց մարզ եկած Փաշինյանը կհասկանա, որ անարդար բան է կատարվել, եւ իր աղջկան կաջակցի, որ նշանակեն տնօրեն, միամտաբար նրան է մոտեցել իր խնդրանքով՝ չպատկերացնելով, որ նման արձագանք կլինի:

Վարչապետի սպառնալիքը նա վատ ընդունեց եւ ինքն էլ նրան սպառնաց. «Գանձաքարում «լավ» կլի ձեր ընտրությունը»: Փաշինյանը զայրացավ, թե Գանձաքարում 2 միլիարդ դրամով դպրոցի շենք են կառուցել, «տասնյակ միլիարդների» ներդրումներ արել: Իբրեւ թե օրենքի տառը պահող եւ միջնորդություններով պաշտոնների նշանակելուն դեմ Փաշինյանը չհիշեց քիչ առաջ ասած իր այն խոսքերը, թե մանկապարտեզի տնօրեն նշանակելն իր գործը չէ՝ համայնքի ենթակայության խնդիր է, եւ ինքնատիրապետումը կորցրած՝ հայտարարեց. «Արգելում եմ, հանկարծ չլսեմ, որ նշանակեցիք: Ասում եմ՝ չլսեմ, չիմանամ, որեւէ պարագայում արգելում եմ, էս մարդու աղջիկը չի աշխատելու մանկապարտեզի տնօրեն: Էս վարչապետի հարց չէ, ռազ որ հասավ էդտեղ, արգելելու եմ, դե վերջ»: Ապա հավելեց. «Գանձաքարում վերջին տասնյակ տարիներին տասնյակ միլիարդների ներդրում ենք արել, էդ ամենի արդյունքում Գանձաքարում վատ պտի լինի՝ թող վատ լինի, գանձաքարցիների ցավն էլ տանեմ, թող վատ ըլնի»:

Իսկ Գանձաքարի դպրոցի շինարարության մասին նշելն ամենեւին Նիկոլ Փաշինյանի օգտին չէ՝ այդ դպրոցի շինարարությունը կարելի է համարել «հեղափոխական իշխանության» եւ «նախկին թալանչիների» համագործակցության վառ դրսեւորում: Շինարարությունն իրականացրել է Էրեբունու նախկին թաղապետ, ԱԺ նախկին պատգամավոր Միհեր Սեդրակյանի որդու՝ Դավիթ Սեդրակյանի «Բիդեք» ընկերությունը: Դպրոցի շենքը պետք է շահագործման հանձնվեր դեռ 2023թ. ամռանը, սակայն 1,5 տարի ուշացել է: 2021թ. սեպտեմբերից, ավելի քան 3 տարի, Գանձաքարի միջնակարգ դպրոցի 465 աշակերտի դասերը կազմակերպվել են գյուղի մշակույթի տանը եւ փոստային բաժանմունքի շենքի 2-րդ հարկում՝ մասնավոր անձի պատկանող տարածքում, հարմարեցված դասասենյակներում: Փոստային բաժանմունքի շենքի 2-րդ հարկի տարածքի համար Գանձաքարի դպրոցը մասնավոր անձին ամեն ամիս վճարել է 150 հազար դրամ: Փաշինյանը 8 տարի է՝ վարչապետ է, սակայն «վերջին տասնյակ տարիների ներդրումների մասին» է ասել: Գանձաքարում տասնյակ միլիարդավոր դրամների ներդրում չի կատարվել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԻ ՕՆԼԱՅՆ ՏԵՍԱՀԱՐԹԱԿՆԵՐԻՑ ՏԵՍԵԼ ԷԻՆ, ԵԿԵԼ ԷԻՆ՝ ՄԵՐ ԱՎՏՈԲՈՒՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՀԱՎԱՔՎԵԼ

*Հարցազրույց ՔՊ-ական պատգամավոր **Արմեն Խաչատրյանի** հետ*

- Շաբաթ-կիրակի օրերին համապետական ընտրությունների քարոզարշավի մեկնարկը տվեցիք: Չնայած հայտարարում եք, թե ներկուսակցական քարոզարշավ եք անում, բայց պարզ դարձավ, որ ձեր արածը դասական նախընտրական քարոզարշավ է: Մի կողմից, խոշորացույցի տակ եք վերցրել ընդդիմադիրներին, մյուս կողմից, ինքներդ թե՛ վարչական ռեսուրսն եք կիրառում, թե՛ պետական բյուջեի հաշվին խոստումներ եք տալիս, պարզ ասած՝ օրենք եք խախտում՝ ոչ պաշտոնական քարոզչությամբ:

- Մենք որեւէ օրենք չենք խախտել, ներկուսակցական քարոզարշավ ենք անում՝ ԱԺ ընտրությունների համամասնական ցուցակի կազմավորման երկրորդ փուլի նախօրեին: Իհարկե, մարզային այցելությունների ընթացքում նաեւ չնախատեսված հանդիպումներ ենք ունեցել քաղաքացիների հետ, կանգառներ ենք արել:

- Բայց լավ էլ պլանավորված հանդիպումներ էին, Փաշինյանն ավտոբուսից տեղեկացնում է, թե ուր եք գնում, քաղաքացիների հետ եք հանդիպում, վերջում միայն կուսակցական հավաքի եք մասնակցում:

- Կուսակցական հավաքները, այո, կազմակերպում ենք նախօրոք, բայց բնակավայրերում կանգառները՝ չենք կարող ասել որտեղ ինչքան կկանգնենք: Հաճախ մեր բնակիչներն են պահանջում, որ կանգնենք: Օրինակ, երեկ Նոյեմբերյանում էլ մարդիկ հավաքվել եւ պահանջում էին, որ կանգնեինք, մենք տեսանք ավտոբուսից, որ շատ մարդիկ են հավաքված, հետեւաբար՝ պետք էր կանգնել:

- Մարդիկ ո՞նց են իմանում ձեր երթուղին, որ գալիս կանգնում են՝ ձեր ճանապարհը կտրում:

- Երեւի օնլայն տեսահարթակներից տեսել են, որ մենք գտնվում ենք իրենց բնակավայրերում, եւ խնդրում են, որ հանդիպենք: Նաեւ արձանագրեցինք մի փաստ, որ այդ հանդիպումները, ժողովրդի մեծ պահանջով, պետք է շարունակական լինեն, եւ պետք է ինչ-որ ֆորմատ գտնենք՝ դրանք շարունակելու համար:

- Ինչո՞ւ են ուզում հանդիպել, խոստումնե՞ր եք տալիս իրենց:

- Մարդիկ պարզապես ուզում են տեսնել վարչապետին, շփվել, իրենց տպավորությունները կիսել, նաեւ՝ իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրենց ընկալումների մասին բարձրաձայնել:

- Բարեգործական ֆոնդերի գործունեությունը՝ ընտրությունների օրը հայտարարելու օրվանից պահանջում եք դադարեցնել, ձեր արածը նույնը չէ՞, նրանք իրենց միջոցներով են օգնում մարդկանց, դուք՝ բյուջեի:

- Մենք ոչ մի խոստում չենք տալիս, եթե հետեւեք վարչապետի լայվը, կտեսնեք:

- Ընտրությունից 3 ամիս առաջ թոշակ եք բարձրացնում՝ այն պարագայում, որ դրանից շաբաթներ առաջ Փաշինյանն ասում էր՝ չկա դրա անհրաժեշտությունը:

- Լավ ենք արել, դա բարեգործություն չի:

- Այո, դա բյուջեի հաշվին ընտրակաշառք է:

- Մեր հաշվին չի, չէ՞, բյուջեի հաշվին է, չի կարելի նման բան ասել: Կառավարության ծրագիր կա հաստատված, թե 5 տարվա մեջ ինչ պետք է անենք:

- Այդ ծրագիրը 5 տարում պետք է անեիք, այնտեղ այնքան խոստումներ կային, որոնց մասով հակառակն եք արել, բացի դա, տարեվերջին բյուջե եք հաստատել՝ թոշակ չբարձրացրիք, հասցրիք ընտրությունների շեմին, որ մարդկանց «կաշառեք»:

- Ինչը հաստատել ենք, արել ենք ու անելու ենք, ուրեմն հիմա էր պետք, որ հիմա ենք արել, եւ լավ ենք արել ու ընտրություններից առաջ էլի լավ բաներ ենք անելու, ինչը հնարավոր է մեր երկրի ու մեր ժողովրդի համար:

- Քարոզչական այդ տրյուկներով, կարծում եք, մարդկանց կարո՞ղ եք ձեր էլեկտորատը դարձնել:

- Դա տրյուկ չէ, եւ մարդկանց էլ խաբում են լրատվամիջոցներն ու հիբրիդային պատերազմ մղողները: Մեր ժողովուրդը ռեալ տեսնում է, որ քաղաքները ծաղկել են, շնչում են, փողոցները կառուցվել են, բուսնկերները սարքվել են, զենքը եկել է, աշխատավարձը բարձրանում է:

- Ձեր «ֆիշկան» ասֆալտն էր, բայց տեսանք, որ մարդաբոյ խրամատներ են հայտնվել Երեւանի փողոցներում, այսինքն՝ ասֆալտն անգամ լավ չեք անում, ուր մնաց՝ թվարկվածները:

- Ոչինչ, հայտնվել են փոսեր, էլի կծածկենք, խնդիր չկա: Մենք ամեն ինչն էլ լավ ենք անում, բանակում բարեփոխումներ են, արտաքին հարաբերությունները լավ են, Հայաստանը գորշ ճահճից դուրս է եկել եւ լուսավոր ճանապարհի վրա է:

- Ձեր հանդիպումների ժամանակ ձեր ճանապարհին հայտնված այդ մի քանի քաղաքացինե՞րն են ասել, որ դրախտ երկիր եք կառուցել:

- Այո, մեր հանդիպումները շատ ջերմ էին, դրական, ամեն ինչ շատ լավ էր, չնայած եղանակային եւ ժամային վատ պայմաններին, կիրակի էր, բոլորը տներում էին, մենք գոհ ենք:

- Առաջ Փաշինյանի մասնակցությամբ բազմամարդ հավաքներ էին լինում, մենք տեսանք հաշված քաղաքացիներ...

- Մենք կարիք չունենք բազմամարդ հավաքների, մենք երկար չենք կանգնել, որովհետեւ դրա ժամանակը չունեինք. երկու մարզ մեկ օրվա մեջ պետք է անցնեինք: Բայց հստակ արձանագրեցինք մի բան, որ ժողովուրդը կարիք ունի նման՝ ավելի երկարատեւ հանդիպումների:

- Մինչ մեր բնական դաշնակցի երկրում պատերազմ է, տարածաշրջանը եռում է, դուք գնացել՝ պերաշկի ու կուկուռուզ էիք ուտում՝ մեր հարեւանությամբ մեկնարկած պատերազմին հստակ գնահատականներ հնչեցնելու փոխարեն, Իշխանությունն անգամ հերթապահ հայտարարություն չտարածեց, որ իր պետության քաղաքացին հասկանա՝ պետություն կա, հետեւում է իրադարձություններին:

- Ինչ անեինք, գնայինք կռվեի՞նք, զենքերը վերցնեինք՝ փողոց դուրս գայինք ու օդ կրակեի՞նք, հերիք չի՞:

- Անգամ ասում են՝ վախեցաք ցավակցական հայտարարություն տարածել, որ ԱՄՆ-ին չնեղացնեք, բայց դա արհամարհանք է հարեւան պետության հանդեպ:

- Բայց ինչո՞ւ եք ուզում նեղացնենք ԱՄՆ-ին:

- Մենք չենք ուզում, բայց հայ ժողովուրդը պիտի տեսնի, որ պետություն կա իր գլխին, որը հետեւում է, արձանագրում է:

- Մեր ժողովուրդն ուզում է, որ Հայաստանում խաղաղություն լինի, եւ կա: Եկեք շատ ուրիշ երկրների մասին չմտածենք, առաջինը մտածենք մեր երկրի մասին: Վստահեցնում եմ՝ ինչն անհրաժեշտ է, օգտակար է մեր երկրին, դա էլ անելու ենք: Կցավակցենք, չենք ցավակցի՝ դա մեր երկրի շահերով է պայմանավորված: Ռուբինյան Ռուբենը շատ լավ նկարագրեց պերաշկի ուտելու խնդիրը, ասաց, որ բոլոր ժամանակներում եղել են պատերազմներ, եւ Հայաստանը մշտապես եղել է այդ պատերազմի մեջ՝ առաջին համաշխարհայինը, երկրորդը, 90-ականներ, մենք միշտ զոհեր ենք տվել, աշխարհում ինչքան ցնցումներ եղել են, հայ ժողովուրդը միշտ ներգրավված է եղել որոշակի առումով աշխարհաքաղաքական ցնցումներին, առաջին անգամն է, որ, այո, շատ անհանգիստ է Միջին Արեւելքը, ամբողջ աշխարհը, բայց մենք պերաշկի ենք ուտում, որովհետեւ մեր խաղաղությունը շատ ամուր է, որ մենք կարողանում ենք պերաշկի ուտենք, ոչ թե զենքը վերցնենք՝ գնանք կռվենք:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՆՈՎՈՅԻ ՈՐԴԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ ԵՎ 1 ՄԻԼԻԱՐԴ 600 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԵՆ ՄՈՒԾՎԵԼ

Ավելի քան 10 ամիս է, ինչ 36 ԱԳԼՃԿ՝ գազալցակայան փակվել է, հիմնականում՝ Արարատի եւ Արմավիրի մարզերում: Սեփականատերերն ԱԺ նախկին պատգամավոր Նահապետ Գեւորգյանն ու Յուվեցի Կարոյի որդին՝ Վիլիկ Կարապետյանն են: Հիշեցնենք, որ անցած տարվա ամռանը Քննչական կոմիտեից գազալցակայանների փակման վերաբերյալ հայտարարել էին. «Քրեական վարույթներով 14 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրօր. 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելը) եւ 5 անձի նկատմամբ՝ 46-290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերով (մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ առանձնապես խոշոր չափերով հարկերը, տուրքերը կամ այլ վճարներ չվճարելուն օժանդակելը)»:

Խոսքը գազի, այսպես կոչված, «լեւի» օգտագործման մասին էր: Այս ամիսների ընթացքում շատ բան է փոխվել. Վիլեն Կարապետյանը վերադարձել է Հայաստան, 500 միլիոն դրամ է «մուծվել» իրավապահներին եւ մնացել ազատության մեջ: ՔԿ-ն էլ իր հերթին հայտարարել է, որ խոչընդոտ չի տեսնում, որ դրանից հետո ԱԳԼՃԿ-ներն աշխատեն: Այսինքն, դրանց փակ լինելու պատճառը «Գազպրոմ»-ն է: «Գազպրոմ»-ից ավելի վաղ մեզ ասել էին, թե գազալցակայանները շահագործելու թույլտվություն չեն տալիս, քանի որ գազի հաշվիչները պետք է փոխվեն, իսկ փոխելու նպատակն այն է, որ հետագայում բացառվի գազագողությունը: Տեղեկություն կա, որ Վ. Կարապետյանն այժմ ակտիվ պրոցեսների մեջ է, դիմում է պատկան մարմիններին՝ ԱԳԼՃԿ-ները բացելու համար: Դրանց փակ լինելը ոչ միայն վարորդների համար է դժվարություններ ստեղծում՝ մեքենաների լիցքավորման առումով, այլեւ մեծ թվով մարդիկ գործազուրկ են դարձել՝ զրկվել աշխատատեղից:

Եվ ահա, մեզ լուրեր են հասել, որ արտերկրում գտնվող Նահապետ Գեւորգյանի որդիները եւս վերադարձել են հայրենիք, նրանց նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելք խափանման միջոցը, հետախուզումը դադարեցվել է: Գեւորգյանները երկիրը լքել էին քրեական վարույթի հարուցումից առաջ, իսկ հայր Գեւորգյանի նկատմամբ դեռ հետախուզումը շարունակվում է:

Քննչական կոմիտե գրավոր հարցում էինք ուղարկել, թե շարունակվո՞ւմ է քրեական վարույթով նախաքննությունը, Ն. Գեւորգյանը, նրա որդիները վերադարձե՞լ են Հայաստանի Հանրապետություն, եւ եթե այո, ապա ի՞նչ խափանման միջոց է ընտրված, առանձին-առանձին որքա՞ն գումար են վճարել Կարապետյանն ու Գեւորգյանը, եւ ինչո՞ւ չեն բացվում ԱԳԼՃԿ-ները: Մեր հարցերին ի պատասխան, մի կիսատ-պռատ տեքստ են ուղարկել, որը չի համապատասխանում հարցին՝ մեղադրյալների նկատմամբ հետախուզումը շարունակվո՞ւմ է, թե՞ ոչ: «ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչությունում քննվում են մի շարք գազալցակայանների փաստացի սեփականատեր Նահապետ Գեւորգյանի եւ մի խումբ այլ անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի հատկանիշներով նախաձեռնված եւ Վիլիկ Կարապետյանի ու մի խումբ այլ անձանց կողմից առանձնապես խոշոր չափերով հարկեր չվճարելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 2-րդ կետերի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթները: Նախաքննության ընթացքում ընկերությունների կողմից պետական բյուջե է վերականգնվել ընդհանուր՝ 1 միլիարդ 600 միլիոն ՀՀ դրամ: Հարցմամբ հայցվող մյուս տեղեկությունները, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, ենթակա չեն հրապարակման»:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Կիրակի օրը մարտիմեկյան արյունալի իրադարձությունների 18-րդ տարին էր:

Հշխանական եռյակը ծաղիկներ խոնարհեց Երեւանի Գրիգոր Լուսավորիչ փողոցին հարակից այգում կանգնեցված «Ազդեցություն եւ հակազդեցություն» հուշարձանին՝ 2008 թ. մարտի 1-ի զոհերի հիշատակին: Դեռեւս 2018 թվականին Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Մարտի 1-ի գործն ամբողջ

70 ՆԱԽԿԻՆ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՍԵՑՐԵԼ ԵՆ

ծավալով բացահայտված է, հետագայում ԱԺ ամբիոնից կրկնեց՝ այդ գործն ամենայն մանրամասնությամբ բացահայտված է, սակայն սպանություններից 18 տարի անց էլ 10 զոհերից եւ ոչ մեկի սպանությունը դեռ բացահայտված չէ, գոնե, թե ում կրակոցից են նրանք սպանվել, եւ ում անմիջական հրամանով են այդ կրակոցները հնչել, մեզ հայտնի չէ:

8 տարվա քննությունից հետո, վերջին օրերին հանկարծ այս գործով նոր կալանավորումներ եղան: Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության պետի առաջին տեղակալ Հովհաննես Թամամյանը ձերբակալվեց, սակայն դատարանը մերժեց նրան կալանավորելու միջնորդությունը: Մեղադրանքներ են առաջադրվել Երեւանի նախկին փոխոստիկանապետ Ռոբերտ Մելքոնյանին, Հայաստանի նախկին ոստիկանապետ Վալերի Օսիպյանին: Հայաստանի երկրորդ նախագահն ու նրա երեք բարձրաստիճան ենթակաները Մարտի 1-ի գործով 4 տարի առաջ արդարացվեցին, սակայն մեկ տարի առաջ գործը վերաբացվեց, հունվարին էլ Հակակոռուպցիոն դատարանի դատավորը հաստատեց Ռոբերտ Քոչարյանի, Սեյրան Օհանյանի, Յուրի Խաչատուրովի եւ Արմեն Գեւորգյանի նկատմամբ նոր մեղադրանքի որոշումները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անցած տարվա սեպտեմբերին հրապարակած վճռով արձանագրել է, որ զոհերի մեծ մասի դեպքում Հայաստանը խախտել է նրանց կյանքի իրավունքը:

Նիկոլ Փաշինյանն ու իր թիմակիցներն այս կիրակի՝ մարտի 1-ին, եկեղեցի չայցելեցին եւ գոնե մարտի 1-ի զոհերի հիշատակը չհարգեցին եկեղեցում՝ պատարագի չմասնակցեցին, մինչդեռ նախորդ բոլոր շաբաթներին՝ երկար ամիսներ, Փաշինյանը, թափառաշրջիկ կրկես հիշեցնող իր շքախմբով, այցելում էր տարբեր եկեղեցիներ, մասնակցում պատարագների, քահանաներին էլ հրամայում էր պատարագի տեքստից զեղչել Վեհափառի անունը: Ակնհայտ է. նա արդեն գիտակցում է, որ իր հակաեկեղեցական արշավը, որն ի սկզբանե էլ չուներ հեռանկար, տապալված է, այն աստիճան տապալված, որ արդեն, եկեղեցի գնալու փոխարեն, ավտոբուսի մեջ կարկանդակ եւ եգիպտացորեն են ուտում եւ ամուսնալուծության դրամա դնում շրջանառության մեջ: Թեմայի շուրջ «Հրապարակը» զրուցել է ՀԱԿ փոխնախագահ **Արամ Մանուկյանի** հետ:

- Նիկոլ Փաշինյանը՝ իր թիմակիցների հետ, գրեթե ամեն կիրակի տարբեր եկեղեցիներ էր այցելում եւ իրեն մոլի հավատացյալ երեւակայելով՝ պատարագների մասնակցում, սակայն մարտի 1-ին եկեղեցի չգնաց ու զոհերի հիշատակին հարգանքի տուրք չմատուցեց: Ըստ Ձեզ՝ ինչն է պատճառը:

- Իրենց համար մարտի 1-ի դեպքերի բացահայտումը բացարձակ խնդիր չէ: Այս ընթացքում օրվա իշխանությունը բացառապես զբաղված է եղել այդ գործը պարտակելով, թաքցնելով եւ մոռացության տալով: Դա սկսվեց այն Սահմանադրական դատարանի որոշումով, երբ միաձայն արդարացվեց Ռոբերտ Քոչարյանը, դրանից հետո ոչ մի հանցագործություն չի բացահայտվել, դեռ հակառակը՝ մարտի 1-ի գործով կային տուժածների դիմումներ, որոնք ներկայացվել էին դատախազություն: Խոսքը շուրջ 70 հոգու արդարացման գործընթացի մասին է, որը նրանք մերժել են, եւ այդ գործն այդպես էլ առաջ չգնաց: 70 նախկին քաղաքական բանտարկյալների գործեր որոշումով կասեցվել են, եւ կանգնել են արդարացման գործընթացները: Այս մարդկանց ողջ նպատակն իրական հանցագործությունը թաքցնելն է: Բոլորս էլ գիտենք, որ ոչ մի հանցագործ մինչ այս պահը պատժված չէ, ոչ մի գործ բացված չէ, եւ ոչ մի հրաման տվողի անուն հրապարակված չէ: Նրանք այդ գործընթացը կասեցնելով՝ իրենց համար «բոբո» ընդդիմադիր բեւեռ են ստեղծել եւ այդ «բոբո»-ով անդադար վախեցնում են ժողովրդին, որ եթե մենք չլինենք, «բոբո»-ն կգա իշխանության: 2021 թվականին էլ ժողովուրդն այդ տրամաբանությամբ քվեարկեց, եւ եղավ այն, ինչ եղավ: Այս մեխանիզմով փորձում են մոռացության տալ ամեն բան: Այն ամենը, ինչ եղել է 2018-ից առաջ՝ քաղաքական, պատմական եւ այլն, Ղարաբաղի հետ կապված խնդիրները.... փորձում են ամեն ինչ մոռացության տալ: Նրանց նպատակը լրիվ այլ է:

- Իսկ ո՞րն է մարտի 1-ը մոռացության տալու Փաշինյանի շահը:

- Որովհետեւ նա ստեղծել է «բոբո» ընդդիմություն, եւ ՍԴ-ի որոշումից սկսած, ամեն բան օգնում է իրենց, որպեսզի «բոբո»-ին չքվեարկեն եւ իրենց քվեարկեն: Ակնհայտ է, որ իշխանությունը մարտի 1-ը դիտավորյալ պարտակել է եւ որեւէ ցանկություն չունի այն բացահայտելու:

- Գուցե իսկապես գլխավոր մեղավորներից մեկը հենց ինքը՝ Փաշինյա՞ն է եւ այդ պատճառով էլ չի ուզում իրականությունը բացահայտել:

- Չգիտեմ, ես հիմնական էլեմենտների մասին խոսեցի: Ի դեպ, անդրադառնալով առաջին հարցին՝ հարգանքի տուրք մատուցելուն, եթե մարտի 1-ը մոռացության են տալիս, ինչո՞ւ պետք է զոհերի հիշատակը հարգեն:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԱՆՑՆՑՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԺՄ ՇԱՏ ԱՎԵԼԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԵՆ, ՔԱՆ ԵՐԲԵՎԷ

Մարզային այցեր, ավտոբուսում կարկանդակ եւ եգիպտացորեն ուտել, սեփական ընտանեկան բաժանության դրամայի բեմադրություն, թոշակների բարձրացում եւ անդադար հնչող նոր խոստումներ: Հունիսի 7-ի խորհրդարանական ընտրությունների քարոզարշավը Նիկոլ Փաշինյանի ակտիվ մասնակցությամբ մտել է թեժ փուլ: Նա թերեւս կարծում է, թե հայ հանրության կյանքում 2018-ից կամ 21-ից հետո ոչինչ չի փոխվել, եւ մարդիկ նույն միամիտն են ու այս անգամ եւս կուրորեն հավատում են իրենց մանիպուլյացիաներին, սուտ խոստումներին: Մինչդեռ իրավիճակը փոխվել է: Փաշինյանն իր շուրջը չի կարողանում անգամ հարյուր մարդ հավաքել՝ առանց ադմինիստրատիվ ռեսուրսի, եւ մի անհատ անձ՝ խանութի սեփականատեր, նրան չի թողնում, որ մտնի իր խանութ: Իսկ ՔՊ-ականները համառորեն խոսում են իրենց վարչապետի լեգիտիմությունից եւ իրենց վերընտրվելու կանխորոշվածությունից:

Թեպետ դեռեւս վաղ է խոսել պաշտոնական նախընտրական քարոզարշավի մասին, սակայն Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը փորձում են երկրի քաղաքական օրակարգը լցնել, բացահայտորեն դիմում են ընտրակաշառքի տարբեր ձեւերի՝ թոշակների բարձրացում, պարգեւավճարներ եւ այլն, իսկ ընդդիմությունն այս ամենին հակազդող ոչինչ չի ձեռնարկում:

Քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանը** մեզ հետ զրույցում խոսելով ներքաղաքական պրոցեսների մասին՝ նկատում է. «Խնդիրը հետեւյալում է՝ պետք է հասկանալ այս քայլերի ռազմավարությունը: Ինչո՞ւ են հիմա անում: Որովհետեւ այս ընտրությունները Փաշինյանի համար ճակատագրական են, այդ պատճառով էլ քարոզարշավը սկսել են ժամանակից շուտ, չնախատեսված թոշակների բարձրացում են արել, սերիալ են բեմադրում՝ Նիկոլ-Աննա սիրային պատմության եւ բաժանության մասին: Այս ամենը վկայում է մի բանի մասին. նրանք հստակ տեղեկություններ ունեն, թե որքան ցածր է գետնի վրա իրենց վարկանիշը: Այն աստիճան ցածր է նրանց վարկանիշը, որ անգամ վարչական ռեսուրսների կիրառումը չի ապահովում 50+1, այդ պատճառով նրանք մինչեւ ընտրությունները քաղտեխնոլոգիական որոշակի հմտությունների կիրառմանն են դիմելու: Փորձում են լրահոսը լցնել իրենցով, փորձում են մեզ հետ խոսել ոչ թե իրենց տապալումների մասին, այլ՝ այն հարցերի մասին, որոնք առկա են երկրում, Արցախից մինչեւ սոցիալ-տնտեսական հարցերի լուծման տապալում. եկեք չմոռանանք, որ այս մարդը 2018 թվականին իշխանության է եկել մարդկանց սոցիալական խնդիրները լուծելու խոստումներով, այլ հարց է, որ նա լուծեց Ադրբեջանի պետական կարեւորագույն խնդիրը՝ հանձնելով Արցախն Ալիեւին, սակայն եկել էր այլ խնդիրներ լուծելու համար: Այժմ ինչ-որ էժանագին սերիալ են բեմադրում, որպեսզի հանրությունը չխոսի իրականության մասին, այն խնդիրների մասին, որոնք օրակարգային են: Այս ամենն արվում է, որպեսզի ապուշության տեղատարափի մեջ չխոսենք Սամվել Կարապետյանի այն առաջարկի մասին, որով նա 300 հազար նոր աշխատատեղ է խոստանում, 20 հազար բնակարան եւ այլն: «Հայաստան» դաշինքի առաջնորդն իր գնահատականն է տալիս տարածաշրջանի վերաբերյալ, նույն Թրիփի երթուղու վերաբերյալ, նա տվեց ճշգրիտ գնահատականներ, խոսեց ելքերի, լուծումների մասին, սակայն, քանի որ իշխանությանը ձեռնտու չէ, որ հանրությունը խոսի այդ թեմաների մասին, այնպես են անում, որ մարդիկ խոսեն իրենց կուկուռուզի եւ պերաշկիների մասին: Նրանք իրականությունը փորձում են քողարկել կեղծ իրականությամբ: Սա է ողջ ճշմարտությունը: Իսկ ընդդիմությունն այս հարցում մի բան կարող է անել՝ հակազդելու համար, մաքսիմում կարող է ավելի ակտիվ լինել: Եթե Նիկոլն իր բաժանության թեմայով մելոդրամա է նկարում, ապա ընդդիմությունն էլ կարող է սոցիալական թեմայով ինչ-որ սերիալ նկարել: Պետք է կարողանալ հակազդել, սակայն ընդդիմությունը, ամեն դեպքում, չի կարող որեւէ կերպ իշխանությանն ինչ-որ բան արգելել»:

Քաղաքագետը նաեւ անդրադարձավ թոշակների բարձրացմանն ու Իջեւանում կիրակի օրը տեղի ունեցած հայտնի միջադեպին, երբ մի տեղացի տղամարդ մոտեցել էր Փաշինյանին եւ բարեխոսում էր իր դստերը մանկապարտեզի տնօրեն նշանակելու համար. «Փորձում են քաղտեխնոլոգիական մեթոդներով լրացնել իրենց լեգիտիմության պակասը, սակայն անգամ փողոցային հարցումները՝ մայրաքաղաքից մինչեւ գյուղեր, վկայում են այն մասին, որ թոշակների բարձրացումը հանրության մոտ ընկալվում է որպես նախընտրական կաշառք: Ինչ վերաբերում է հայտնի դեպքին, որը տեղի է ունեցել Իջեւանում, ապա կան կասկածներ, որ այն բեմադրություն էր, գուցե այդ մարդը եւս հատուկ ուղարկված էր: Հիշո՞ւմ եք, երբ Վալերի Օսիպյանին Փաշինյանը նշանակում էր ոստիկանապետ, հասարակությունը, կոպիտ ասած, այդ «կուտը կերավ», որ նախկին ռեժիմի ներկայացուցիչը պաշտոն ստացավ: Դրանով եւս Փաշինյանը փորձում էր հանրությանն ինչ-որ բան հասկացնել, սակայն այժմ ամեն ինչ ջրի երես է դուրս եկել, մարդիկ էլ չեն վստահում իշխանություններին: Ասեմ ավելին՝ այս ընտրություններում ընդդիմությունն ունի իշխանափոխության ավելի մեծ հնարավորություն, քան երբեւէ: Նիկոլ Փաշինյանի վարկանիշի գահավիժումը ընդդիմությանն աշխատելու այնքան մեծ տեղ է տալիս, որ անցնցում քաղաքական փոփոխություններն այժմ շատ ավելի հավանական են, քան երբեւէ»:

ԻՐԱՆ

ԽԻԶԱԽ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԵՎ ՎԱԽԿՈՏ ԴԱՎԱՃԱՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրան-ԱՄՆ պատերազմն առաջին հերթին երկրի ղեկավարների՝ հանուն իրենց երկրի ինքնիշխանության ինքնազոհաբերման պատրաստակամության մասին է: ԱՄՆ-ն տեւական ժամանակ պահանջում էր, որ Իրանը կատարեր իր առաջադրած պայմանները, ենթարկվեր իր պահանջներին, դառնար իրեն ենթակա, վասալ պետություն, այնպիսին, ինչպիսիք տասնյակներով կան աշխարհում, կարելի է ասել՝ աշխարհի երկրների մեծամասնությունը: Իրանի իշխանությունները, այդ թվում եւ այաթոլլա Ալի Խամենեին, գիտեին, որ իրենք դուրս են եկել իրենցից ռազմական, տեխնոլոգիական, հետախուզական առումով անհամեմատ ավելի ուժեղ հակառակորդի դեմ, որ ԱՄՆ հրթիռները կարող են հասնել իրենց բնակարաններ եւ անգամ՝ թաքստոցներ: Գիտեին, որովհետեւ այդպես եղել է անցյալ տարվա ամռանը տեղի ունեցած 12-օրյա պատերազմի ժամանակ, երբ սպանվեցին իրանցի բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ եւ սպաներ: Այդպես եղել է, երբ սպանվել կամ առեւանգվել են այլ երկրների ղեկավարներ, ԱՄՆ-ի դեմ պայքարող կազմակերպությունների առաջնորդներ: Իրանի ներկայիս ղեկավարությունը, իր աչքի առաջ ունենալով իրենց եւ իրենց ընտանիքի անդամների մահվան հեռանկարը, այնուամենայնիվ, ընտրեց դիմադրության ճանապարհը: Այաթոլլա Ալի Խամենեին ցուցադրաբար չլքեց իր նստավայրը եւ չմտավ թաքստոց՝ դրանով ցույց տալով, որ չի պատրաստվում թաքնվել իր հակառակորդներից, որ իր կյանքն ավելի մեծ արժեք չունի, քան մյուս՝ շարքային կամ ոչ այնքան շարքային իրանցիների կյանքը:

Կարող էին, չէ՞, ԱՄՆ-ի հետ բանակցող իրանցի բարձրաստիճան պաշտոնյաներն ընդունել իրենց ներկայացված պահանջ-վերջնագիրը եւ հայտարարել, որ ընտրում են խաղաղության օրակարգը, Իրանը դարձնում են խաղաղության խաչմերուկ, որտեղ հատվելու են տարբեր տրանսպորտային միջանցքներ, որոնցից մեկի անունը կարող էին դնել Դոնալդ Թրամփի, մյուսը՝ նրա կնոջ՝ Մելանիայի անունով, կարող էին նաեւ Զեյ Դի Վենսի անունով միջանցք էլ ստեղծել, խոստանալ իրենց հասարակություններին, որ շուտով ամերիկյան բազմամիլիարդանոց կապիտալը գալու է Իրան, ստեղծվելու են հազարավոր նոր աշխատատեղեր, ու իրանցի ժողովուրդն ապրելու է բարեկեցության մեջ: Բարեկեցիկ ստրկության մեջ: Եվ իրենք կենդանի կմնային, եւ ամերիկացիների հետ փող կշինեին ու կհարստանային: Բայց այդ դեպքում Իրանը կդադարեր լինել անկախ եւ ինքնիշխան պետություն, կդառնար ամերիկյան տիրապետությունը եւ հպատակությունն ընդունած հերթական պետությունը, այնպիսին, ինչպիսին Պարսից ծոցի բազմաթիվ արաբական երկրներն են, որոնց տարածքն օգտագործելով՝ ԱՄՆ-ն հարվածում է Իրանին:

Ասում են՝ Իրանում բռնապետություն է, եւ ԱՄՆ-ն իր հարվածներով օգնում է իրանցի ժողովրդին՝ ժողովրդավարություն կառուցել: Ամերիկյան հարվածներից եւ հոգեւոր առաջնորդ Խամենեիի մահվան լուրի հաստատումից հետո տասնյակ եւ հազարավոր իրանցիներ դուրս եկան փողոց եւ սգում են իրենց հոգեւոր առաջնորդի մահը, վանկարկելով՝ «մահ Ամերիկային»: Այդ մարդիկ չեն ուրախացել կամ ոգեւորվել բռնապետի մահով, որովհետեւ նրան չեն համարում բռնապետ, այլ համարում են առաջնորդ, այդ թվում՝ եւ քաղաքական: Իրանում նույնիսկ նրանք, ովքեր դեմ էին գործող իշխանությանը, հրճվանքի կամ խրախճանքի ցույցեր չկազմակերպեցին, որովհետեւ նույնիսկ նրանք են հասկանում, որ օտար պետության կողմից երկրիդ դեմ կազմակերպված հարձակումը չի կարող խրախճանքի առիթ լինել:

Հիմա պատկերացրեք, թե ինչ կլիներ Հայաստանում, եթե որեւէ երկրի հրթիռային հարվածի արդյունքում սպանվեին Հայաստանի իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչները, այդ թվում՝ երկրի նախագահը եւ վարչապետը: Նրանց ընտանիքից կամ հարազատներից բացի, դա որեւէ մեկի համար սուգ չէինք անել սեփական ուժերով, մեր փոխարեն արեցին երկնային ուժերը:

Բայց Հայաստանի իշխանության որեւէ ներկայացուցչի նման բան չի սպառնում, նրանք, որ չգիտեն, թե ինչ բան է դիմադրելը, նրանք, որ մտածում են՝ իշխանությունը տրված է իրենց հանուն երկրային բարիքներից լիուլի օգտվելու, կյանքը լավագույն ռեստորաններում, երկրներում, նորանոր կանանց կամ տղամարդկանց հետ վայելելու համար, միշտ առաջնորդվելու են խաղաղության՝ հպատակվելու եւ հնազանդվելու օրակարգով: Միաժամանակ, ամենաշատն են խոսելու անկախությունից եւ ինքնիշխանությունից՝ երբեւէ պատկերացում անգամ չունենալով, որ անկախությունը եւ ինքնիշխանությունը հասանելի են միայն նրանց, ովքեր հաղթահարել են վախը՝ մահից, կախվածությունը՝ նյութական աշխարհից:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

«ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ». ՆՊԱՏԱ՞Կ, ԹԵ՞ ԿԱՐԳԱԽՈՍ

«Առաջարկ Հայաստանին» նախաձեռնության հեղինակներն իրենց նախընտրական ծրագրի առանցքային դրույթ են հռչակել «երաշխավորված խաղաղությունը»՝ որպես «միջազգային իրավական եւ իրատեսական մեխանիզմներով ամրագրված եւ վերահսկողության ու պատասխանատվության հստակ գործիքներով ապահովված պայմանավորվածությունների համակարգ»:

Ակնհայտ է, որ հեղինակները պատկերացնում են «երաշխավորված խաղաղություն» կոչվող երազանքի հաստատման ճանապարհին առկա բարդագույն խնդիրները: Սակայն նվիրական այդ գաղափարի իրականացման համար անհրաժեշտ գործիքների եւ մեխանիզմների թեկուզ նախնական ուրվագծի բացակայությունը՝ ներկայացված մտահղացմանը հաղորդում է ակնհայտորեն դեկլարատիվ բնույթ: Այս զգացողությունն ավելի է սրվում՝ հետեւելով գործնականում մեկնարկած քարոզարշավին, որն աչքի է ընկնում պոպուլիստական կարգախոսների առատությամբ:

Միջազգային հարաբերությունների տեսության մեջ նորմատիվ գաղափարների շարքին դասվող «երաշխավորված խաղաղության» գաղափարը ենթադրում է ռազմաքաղաքական մեխանիզմների եւ դրանց գործառնությունն ապահովող արտաքին դերակատարների մի բարդ համակարգ, որը կոչված է երաշխավորել խաղաղության համաձայնագրի իրականացման արդյունավետ վերահսկողություն եւ դրա խախտման դեպքում խաղաղության անվերապահ պարտադրում:

Պատահական չէ, որ Ուկրաինայի շուրջ ընթացող բանակցություններում խաղաղության երաշխիքների հարցը դարձել է ամենաբարդերից մեկը. Կիեւին չի բավարարում կայուն եւ երկարատեւ հրադադարի հաստատման հեռանկարը՝ ուկրաինական կողմը պահանջում է երաշխավորել երկրի կայուն անվտանգության ռեժիմը ոչ թե քաղաքական հավաստիացումների, այլ երրորդ կողմերի ստանձնած հանձնառությունների հաշվին՝ համարժեք ՆԱՏՕ-ի կանոնադրության 5-րդ հոդվածով սահմանված կոլեկտիվ պաշտպանության պարտավորություններին: Ու քանի որ դրանք թե քաղաքական, թե՛ ռեսուրսային առումով վիճահարույց են եւ թանկ, այսպես կոչված՝ «կամավորների կոալիցիայի» անդամ-երկրները դեռ վարանում են (հնարավոր է, սա է պատճառը, որ ուկրաինական կողմից «երաշխավորված խաղաղության» հաստատման նպատակով օրերս կրկին կոչեր հնչեցին՝ վերամիջուկայնացնել երկրի ռազմական ներուժը):

Այստեղից հետեւություն. «երաշխավորված խաղաղության» գաղափարն առաջ մղելու համար անհրաժեշտ է պարզաբանել հաջորդ հարցադրումները:

Առաջինը, կապված վերահսկողություն հետ. ո՞վ, ինչպե՞ս եւ ի՞նչ մանդատով է իրականացնելու հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի կատարման մոնիթորինգը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է դիտորդներին եւ սահմանի վերահսկման առաքելություններին, խախտումների արձանագրման ընթացակարգերին, փաստերի անկախ վերիֆիկացմանը:

Հաջորդը, կապված պարտադրանքի հետ. ո՞ւմ կողմից, ի՞նչ հերթականությամբ եւ ի՞նչ գործողություններ կձեռնարկվեն, եթե խաղաղությունը խախտվում է: Խոսքը, մասնավորապես, այն համաձայնեցված գործառույթների մասին է, որոնք թույլ կտան երաշխավոր երկրներին կամ Հայաստանի դաշնակիցներին՝ իրենց ստանձնած պարտավորությունների շրջանակներում ցուցաբերել անհապաղ արտաքին ռազմական եւ քաղաքական աջակցություն՝ ագրեսորին զսպելու եւ երկրի անվտանգությունն ու տարածքային ինքնիշխանությունն ապահովելու նպատակով:

Ուստի, «երաշխավորված խաղաղության» գաղափարն առաջ մղելու նպատակով, ՀՀ ընտրողին, ինչպես նաեւ տարածաշրջանային անվտանգության ապահովմանը ներգրավված ուժային կենտրոններին անհրաժեշտ է ներկայացնել հեղինակների պատկերացումներն այն մասին, թե.

1. որ երկրները կամ միջպետական կազմակերպություններն են դիտարկվում որպես Հայաստանի հնարավոր երաշխավորներ

2. որն է երաշխիքների ռազմավարական գինը Հայաստանի համար. արտաքին երաշխիքները չեզոք չեն եւ ունեն գին՝ քաղաքական մանեւրի ազատության սահմանափակումների, ռեսուրսների եւ պարտավորությունների տեսքով:

Առանց նշված հարցերի պարզաբանման, «երաշխավորված խաղաղության» նորմատիվ գաղափարը վերածվում է հերթական պոպուլիստական կարգախոսի եւ խարխլում է «Առաջարկ Հայաստանին» նախաձեռնության քաղաքական ծրագիրը: Ավելին, այն ստեղծում է չափազանցված սպասումներ եւ հղի է հերթական դառը հիասթափությամբ:

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԳԽ պատգամավոր (1990-95թթ.)
ԱԺ պատգամավոր (1995-99թթ.)
ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ, ԶԱՐԴԵՐԸ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՆՁՆԵԼ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉՆՉԵԼ՝ ՈՉ

Լեռ

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Աննա Հակոբյանի հայտնի հայտարարությունից հետո մարդիկ շարունակում են քննարկել թիվ 1 ընտանիքի բաժանման մանրամասները: Թեեւ զրույցները տարբեր խավերի մարդկանց հետ այն հետեւության են բերում, որ հասարակության ցավն անձնական կյանքի մանրամասների շուրջ չէ: Մեր երկրում իշխանավորների խոսքի հանդեպ այնպիսի վստահության ճգնաժամ կա, որ ցանկացած ողբերգություն անգամ որպես բեմադրված տեսարան է ընկալվում, որպես նախընտրական հաշվարկ:

Բեմադրություն՝ հնամաշ ջինսով. Աննա Հակոբյանը ներկայանում է «ոչինչ չունեցողի» կերպարում եւ հայտարարում, որ իր զարդերն ու հագուստը հանձնում է պետությանը, բայց դա ոչ թե խղճահարություն է առաջացնում, այլ հարց. «Եթե տարիներ շարունակ ունեցել ես ակտիվ հրապարակային դերակատարում, քաղաքական հայտարարություններ ես արել, ազդեցություն ես ունեցել երկրում տեղի ունեցող ամեն ինչի վրա, ապա ինչպե՞ս է այդ ամբողջը հանկարծ վերածվել «զրոյական բյուջեով» զգեստապահարանի պատմության»: Նախ, քաղաքական պատասխանատվությունը չի չափվում հագուստի արժեքով: Եթե ասում ես՝ «ոչինչ չեմ տանում հետս», հանրությունը հարցնում է՝ իսկ ազդեցությո՞ւնը: Իսկ պետական որոշումների վրա ունեցած ազդեցությո՞ւնդ, իսկ այն հայտարարություններ՞ը, որոնք տարիներ շարունակ հնչել են պետական հարցերի շուրջ՝ քո շուրթերից ու քո էջում: Աննա Հակոբյան, զարդերը կարելի է հանձնել, քաղաքական հետեւանքները՝ ոչ:

«Ես չեմ հիշում՝ ինչքան գումար ունեմ». երբ հայտարարում ես, որ չգիտես՝ որքան գումար ունես, կամ չես հիշում տան վաճառքից մնացած գումարի չափը, դա մի բանի մասին է վկայում՝ փողի արժեքը չգիտես: Որովհետեւ Հայաստանում շատ քիչ մարդ կա, որ չի հիշում՝ ինչքան փող ունի բանկում կամ դրամապանակում: Հանրային ընկալման մեջ դա եւս պատասխանատվությունից խուսափելու խորհրդանիշ է, որովհետեւ հասարակությունը տարիներ շարունակ լսել է հակառակը՝ հաշվետվողականության, թափանցիկության, նոր քաղաքական մշակույթի մասին խոստումներ: Երբ «առաջնորդը»՝ Նիկոլ Փաշինյանը, խոսում է «ժողովրդի իշխանությունից», իսկ նրա կողքին ապրողներն ունենում են «հիշողության կորուստներ» եւ հեքիաթներ են պատմում զգեստապահարանի «աճպարարությունների» մասին, առաջանում է անհամապատասխանություն իրականության եւ խոսքի միջեւ: Քաղաքական ճգնաժամը հաճախ սկսվում է հենց նման անհամապատասխանությունից:

«Ինքնազոհության» միֆը. քաղաքական թիմերը ճգնաժամի պահին հաճախ դիմում են հուզական ռազմավարության: Քննադատությունը ներկայացվում է որպես անձնական վիրավորանք, դժգոհությունը՝ որպես «ատելություն»: Բայց հասարակության մեծ մասը հետաքրքրված է ոչ թե անձնական հարաբերություններով, այլ՝ հանրային դերով: Եթե տիկինը տարիներ շարունակ հրապարակային ներգրավվածություն է ունեցել, հիմնադրամ է ղեկավարել, քաղաքական հայտարարություններ արել, միջազգային հարթակներում ներկայացել, ապա քննադատությունը դառնում է քաղաքական, ոչ թե անձնական: Անգամ Խորհրդային Միության վերջին փուլում Միխայիլ Գորբաչովի կողքին մենք նման կին ենք տեսել՝ Ռաիսա Գորբաչովան, որի կերպարը դարձավ համակարգի խորհրդանիշներից մեկը: Երբ համակարգը ճգնաժամի մեջ էր, խորհրդանիշներն էլ դարձան քննադատության թիրախ: Ոչ թե այն պատճառով, որ նրանք իրավական որոշումներ էին կայացրել, այլ որովհետեւ քաղաքական ներկապնակի անբաժանելի մասն էին եւ ստվերային ազդեցություն ունեին ամեն ինչի վրա:

«Պերաշկին»՝ որպես սիմվոլ. հեգնանքը ծնվում է այնտեղ, որտեղ հանրային ցավն ուղիղ չի արտահայտվում: Երբ սոցիալական ցանցերում «պերաշկին» դառնում է քննարկման թեմա, դա ոչ թե կենցաղային դրվագ է, այլ՝ քաղաքական մետաֆորա: Մարդիկ իրենց հիասթափությունն արտահայտում են սարկազմով, որովհետեւ լուրջ հարցերը պատասխան չեն ստացել: Հասարակությունը չի պահանջում դրամատիկ հայտարարություններ ու ներկայացումներ: Նա պահանջում է հստակություն. «Ինչ դեր է ունեցել տիկին Աննան անցած ութ տարիներին, նրա հրապարակային ազդեցությունը պետական որոշումների կայացման մթնոլորտում», «Ի՞նչ պատասխանատվություն է կրում նա՝ որպես ակտիվ դերակատար՝ բարոյական առումով», «Որտե՞ղ է ավարտվում «մասնավոր կյանքը», եւ սկսվում «քաղաքական ազդեցությունը»»:

Եթե այս հարցերը մնում են օդում կախված, ապա ցանկացած հուզական ելույթ ընկալվում է որպես մարդկանց ուշադրությունը շեղելու փորձ: Կարելի է սուր խոսել՝ առանց վիրավորանքի: Կարելի է կատակել՝ առանց արժանապատվությունը նսեմացնելու: Կարելի է քննադատել, եւ դա «ընտանիք մտնել» չի նշանակում: Խնդիրը քաղաքական մշակույթն է: Հանրությունն ունի իրավունք՝ պահանջելու հաշվետվություն: Հասարակությունը ծաղր ու կեղծ է համարում, երբ իրեն ասում են՝ «չեմ հիշում» կամ «ոչինչ չեմ տանում»: Հանրությունը զգում է, երբ իրեն փորձում են շեղել բովանդակային հարցերից: Ի վերջո, քաղաքական կյանքում կա մի պարզ օրենք. ազդեցությունն ու պատասխանատվությունն անբաժանելի են: Դրանք հնարավոր չէ տարանջատել հայտարարությամբ, հնարավոր չէ պահել պահարանում, հնարավոր չէ փոխանցել նվերի ձեւով: Եվ որքան էլ փորձ արվի թեման տեղափոխել անձնական դրամատիզմի դաշտ, հանրային քննարկումը վերադառնում է հիմնական առանցքին:

Այնպես որ, տիկին Աննա Հակոբյան, պատասխանատվությունը զգեստապահարանում անհնար է պահել:

ՆՊԱՏԱԿՆ ԻՐԱՆԸ ՄԱՍՆԱՏԵԼՆ Է, ԻՆՉԸ ՇԱՏ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Հայկա ԱԼՈՅԱՆ

Իրանական կողմը սպասում էր ԱՄՆ-Իսրայել հարձակմանը եւ պատրաստ էր դրան՝ նախկին իսրայելա-իրանական պատերազմի փորձը հաշվի առնելով ու դրանից հետեւություններ անելով՝ «Հրապարակի» հետ զրույցում անդրադառնալով ԱՄՆ-Իսրայել-Իրան պատերազմին, ասաց միջազգայնագետ, քաղաքական մեկնաբան **Դավիթ Կարապետյանը**:

«Արաբական այն երկրները, որտեղ տեղակայված են ամերիկյան բազաներ, բավականին լուրջ հարվածներ են ստացել Իրանից՝ բալիստիկ հրթիռներով: Սա նշանակում է, որ իրանական կողմը նախապես պատրաստված է եղել այս պատերազմին եւ նախապես ընտրել է իր թիրախային օբյեկտներն ու նշանակետերը ու հասցրել հարվածներ այն հատվածներին, որոնք կարող են ուղիղ սպառնալիք լինել Իրանի համար: Առաջին անգամ Իրանը ցույց տվեց «Ֆատահ» կոչվող ծանր մարտագլխիկով գերձայնային հրթիռը, որն արձակվեց բավականին արդյունավետ: Նրանք կարողացան անգամ թիրախավորել ու հարվածել «Աբրահամ Լինքոլն» եւ «Ջերալդ Ֆորդ» ավիակիրներին, իսկ դրանք լուրջ հարվածներ էին»,- ասաց Կարապետյանը: Հորմուզի նեղուցի հատվածում գտնվող եւ ընդհանրապես Պարսից ծոցի եւ Արաբական ծովի ավազանում գտնվող այն նշանակետերը, որոնք պոտենցիալ վտանգ էին Իրանի համար, ենթարկվել են հրթիռակոծման: «Բայց նաեւ փաստն արձանագրենք՝ ընդամենը 48 ժամում Միացյալ Նահանգների ու Իսրայելի համատեղ գործողությունները, այսպես կոչված՝ օպերացիան, Մոսադի բարձր արդյունավետ աշխատանքի, նաեւ ագենտուրայի աշխատանքի շնորհիվ հասան իրենց նպատակին, որովհետեւ փաստացի բարձրաստիճան ռազմաքաղաքական ղեկավարությունը, ներառյալ Այաթոլլա Խամենեին, իրենց ընտանիքների անդամների հետ, սպանվեցին: Ստացվում է, որ իսրայելա-ամերիկյան տանդեմը հասավ այն նպատակին, որն իրենց առաջ դրել էր»,- նկատում է միջազգայնագետը:

Հաջորդիվ նպատակը հոգեւոր դասի տապալումն է ու աշխարհիկ իշխանության ստեղծումը: Այսինքն, ստացվում է, որ նպատակի առաջին մասի պլան-մաքսիմումը կատարել են, հաջորդիվ աշխարհիկ պետության ստեղծման նախադրյալներն են դրվում: «Դրա համար Թրամփը կոչ է անում Իրանի ժողովրդին, որ իրենց հարվածներից հետո դուրս գան փողոց եւ տապալեն իշխանությունը: Ռեզա Փահլավին է նման կոչերով հանդես գալիս, եւ հասկանալի է, որ այս պարագայում նրանց նպատակը նոր իշխանությունների հետ Իրանի աշխարհիկացումն է, բայց ես կարծում եմ, որ հեռահար նպատակներից մեկն Իրանի մասնատումն է, որը շատ ավելի վտանգավոր է: 150 երեխա զոհվել է, նահատակվել են բարձրաստիճան ռազմաքաղաքական ղեկավարները, տեղեկություն կա, որ զոհվել է նաեւ նախկին նախագահ Ահմադինեժադը՝ իրարամերժ հայտարարություններ են հնչում, Խամենեիի մեկ տարին չբոլորած՝ թոռնուհին էլ է զոհվել, ընդ որում՝ այստեղ եւս շահարկման առարկա կա, որովհետեւ կարող էին գերգաղտնի բունկերում պատսպարվել, սակայն հրաժարվել են, որ եթե մահը եկել է, ապա իրենք պատվով դիմավորեն այն: Եվ նրանք հասկանում էին, որ իրենց գործը շարունակող կա, այս մասով նրանք, այդ մտահոգությունն ունենալով հանդերձ, գնացել են այդ քայլին»,- նկատում է փորձագետը:

Խամենեին պատրաստ էր իր մահվանը, նա բազմիցս այդ մասին հայտարարել է, սա նշանակում է, որ համակարգն ունի նախապատրաստած սցենար, անցումային մեխանիզմ, եթե կարողանան իրականացնել դա: «Այս պարագայում հեղափոխական գվարդիան՝ նախագահ Փեզեշքիանի գլխավորությամբ, ժամանակավորապես վերահսկում է իրավիճակը, բայց հաջորդիվ չգիտենք, թե ինչ կլինի: Հիմա խնդիր է դրված, որ Պահապանների կորպուսը կենտրոնացնի իշխանությունն իր ձեռքում, եթե դա լինի, ապա կլինի ռազմականացված Իրան: Գուցե այնտեղ սահմանադրական անցում տեղի ունենա, օրինակ, Իրանը պահպանի հոգեւոր առաջնորդի ինստիտուտը, բայց խորհրդանշական բնույթ կրի, ինչպես Անգլիայում թագավորը կամ թագուհին, բայց հարց է՝ հեղափոխական գվարդիան թույլ կտա՞ զրկել իրեն իշխանությունից, առանց մեծ դիմադրության: Եվ այստեղ մեծ են մտահոգությունները, որ եթե քաոսի մեջ է հայտնվում Իրանը, ընդհուպ մասնատման հիմքեր կան, Դուք պատկերացնում եք, չէ՞, թե տարբեր խմբավորումների միջեւ իշխանության համար ինչպիսի պայքար է գնալու: Այսինքն, Միացյալ Նահանգների եւ Իսրայելի խնդիրը հենց դա է, որ սա վերածվի ներքաղաքական ճգնաժամի եւ սա ամենավտանգավոր սցենարն է նաեւ տարածաշրջանի համար, առավել եւս՝ Հայաստանի համար, երբ մենք ականատես դառնանք սահմանային անկայունության, փախստականների ու տնտեսական ճգնաժամի»,- շեշտում է Կարապետյանը:

Իրականում, ոչ թե ավելի շատ Իրանի դեմ է ուղղված այս պատերազմը, այլ վերջնական նպատակը Չինաստանն է: Միացյալ Նահանգները, վերցնելով Իրանը, փորձում է կոտրել դեպի Չինաստան նավթի մատակարարման կարեւորագույն շղթան՝ սրանով հարվածելով կայծակնային արագությամբ զարգացող Չինաստանի տնտեսությանն ու Իսրայելին դարձնել տարածաշրջանի թիվ մեկ տերությունը եւ իրեն հավատարիմ ֆորպոստ-պլացդարմը Մերձավոր Արեւելքում՝ եզրափակեց Դավիթ Կարապետյանը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԿԱՐԾԵՍ 19-ՐԴ ԴԱՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՂ ԼԻՆԵՄ՝ ԱՅԴ ԱՄԲՈՂՋ ԲԵՌՆ ԻՄ ԵՎ ՄԻ ՔԱՆԻ ՄԱՐԴՈՒ ՈՒՍԵՐԻՆ Է ԴՐՎԱԾ

Պատմաբան եւ հնագետ, դոկտոր-պրոֆեսոր, Արցախի հնագիտական արշավախմբի ղեկավար, Արցախի Տիգրանակերտը հայտնաբերող եւ պեղող **Համլետ Պետրոսյանի** հետ զրուցել ենք Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության յուրացման եւ ոչնչացման խնդիրների, այդ հարցում Հայաստանի պետական դիրքորոշման շուրջ:

- Ադրբեջանը շարունակում է ոչնչացնել հայկական մշակութային ժառանգությունն Արցախում: Օրերս էլ Մեծ Բրիտանիայի խորհրդարանում այդ խնդիրն արծարծվեց: Իսկ մենք՝ որպես պետություն եւ այդ ժառանգության կրողներ, ի՞նչ ենք անում:

- Շատ լավ տեղյակ եմ անգլիական պառլամենտում կատարվողի մասին: Արցախի նախկին օմբուդսմեն Արտակ Բեգլարյանն ինձ հետ խոսել է, իրենք մեզ հարցախույզ են ուղարկել, մենք լրացնում ենք եւ ետ կուղարկենք: Արտակ Բեգլարյանն արդեն ելույթ է ունեցել, ինձ էլ են առաջարկել ելույթ ունենալ անգլիական պառլամենտի քննության շրջանակում: Դառնալով Արցախի մշակութային ժառանգությանը՝ կարող ենք երկու մոտեցում նկատել: Հայագիտության հիմնական խնդիրներից մեկը պատմական Հայաստանի հայկականությունն ապացուցելն է եղել եւ այսօր էլ հայտնի չափով մնում է հետազոտողների առաջնահերթ խնդիրներից մեկը, որովհետեւ հայ հանրությունը սպասելիքներ ունի: Սա հայտնի չափով կարելի է տարածել նաեւ Արցախի վրա: Սակայն մի շատ կարեւոր հարց կա, որը, ըստ էության, հայ հանրույթի անցած ճանապարհն է. միշտ չէ, որ մեզ հաջողվել է ձեւավորել քաղաքական հանրույթ այդ ճանապարհին: Այդ տեսակետից, եթե մի քիչ կոպիտ բնորոշենք, միջնադարյան հայ հանրույթը դավանական հանրույթ էր, ոչ թե քաղաքական: Ես կարծում եմ, որ մեր անհաջողությունները պատմական նման փորձի արդյունք են:

- Անհաջողություն ասելով ի՞նչ նկատի ունեք:

- Նկատի ունեմ Արցախի կորուստը, այն իրավիճակը, որի մեջ մենք գտնվում ենք, որ դարձել ենք խաղալիք: Կարծես թե պատմությունը մեզ շանս էր տվել, եւ հաջողություններ կային՝ ձեւավորվել որպես քաղաքական հանրույթ, ինչը նշանակում է, որ քաղաքական գործիչները, քաղաքական էլիտան իրենց նպատակները պետք է ավելի բարձր դասեն իրենց ընտանեկան, ազգակցական, հայրենակցական նպատակներից: Բայց մենք տեսանք հակառակը՝ ով գալիս է իշխանության, փորձում է իր ընտանեկան, ազգակցական, հայրենակցական համակարգով աշխատել:

- Մենք այսօր էլ դա ենք տեսնում:

- Ես ձեռնպահ կմնամ այս իշխանություններին բնութագիր տալուց: Այս իշխանությունների այս կամ այն չափով հեղինակությունը, հարգանքը մարդկանց շրջանում այն է, որ իրենք սկզբունքորեն, գոնե խոսքով, հակադրվել են նախկին իշխանությունների թալանչիական քաղաքականությանը, որն ակնհայտ էր: Ես 17-18 տարի աշխատել եմ Արցախում՝ սահմանի վրա, հանդիպել եմ Արցախի բոլոր նախագահներին, վարչապետերին, գյուղապետերին, գեներալներին եւ հիմա չեմ պատրաստվում այդ մասին խոսել, բայց ինձ համար շատ զարմանալի էր, որ բոլորի համար նախեւառաջ սեփական շահն էր, այլ ոչ թե պետական մտածողությունը: Պարզ չէ՞ր, որ այդպես մենք հեռու չէինք գնա: Գուցե չարժե, որ այս ամենն ասում եմ…

- Դառնանք Արցախի մշակութային ժառանգության ոչնչացմանը. Հայաստանից պետական մակարդակով չկա արձագանք, ժողովուրդն էլ կարծես անտարբեր է: Սակայն այնտեղ, աշխարհի աչքի առաջ, քրիստոնեական եւ նախաքրիստոնեական մշակույթ է ոչնչացվում: Անգամ Անգլիայի խորհրդարանում են անհանգստացած, իսկ մեր ԱԺ իշխող խմբակցությունում լռություն է:

- Որպեսզի կարողանանք հստակ տարբերակել, նախ պետք է իմանանք, թե ինչ է ուզում եւ ինչ է անում թշնամին: Ասեմ, որ Ադրբեջանի քաղաքականությունը՝ ուղղված հայկական մշակութային ժառանգությանը, միակետ եւ միագիծ չէ: Ինքն ունի բավականին մանրամասն մշակված քաղաքականություն, որտեղ տարբերակվում են ժամանակաշրջանները: Տարբերակվում են ժամանակակից կամ անկախության շրջանում ստեղծված հուշարձանները եւ դրանից առաջ ստեղծված հուշարձանների «պատկանելությունը»: Երբ ասում ենք, որ նրանք ոչնչացնում են՝ կետ 1-ին. ոչնչացնում են Արցախի Հանրապետության շրջանում ստեղծված հուշարձանները: Ոչնչացվում են առանց որեւէ ձեւականության: Կետ 2-րդ. կան հուշարձաններ, որոնք շատ հայտնի են, դա Ամարասն է, Գանձասարը, Դադիվանքը, Ցիծեռնավանքը եւ այլն: Իրենք մտածում են, որ եթե դրանք դնեն ու պայթեցնեն, միանշանակ, իրենց դեմ է լինելու համաշխարհային հանրության կարծիքը, եւ հայտարարում են, որ դրանք հայկական չեն, աղվանական են: Դրանք միջնադարյան՝ մինչեւ 17-18-րդ դարերի հուշարձաններ են: Այստեղ մի հանգամանք կա, որը մերոնք միշտ մոռանում են: Մոտավորապես 5-րդ դարի կեսերից ստեղծվում է Աղվանից եկեղեցին՝ քաղաքական զանազան պատճառաբանություններով, Սասանյան ռեֆորմների արդյունքում՝ ընդդեմ կովկասյան ցեղերի: Որպեսզի մի ամուր պատնեշ ստեղծեն, Արցախը եւ Ուտիքը միացնում են Աղվանից թագավորությանը, հետո՝ Աղվանից մարզպանությանը: Այդ մասին մանրամասն մեր պատմիչներն են գրում: Ե՛վ Արցախը, ե՛ւ Ուտիքը մտնում են Աղվանից կաթողիկոսության կազմի մեջ՝ մինչեւ 19-րդ դարի կեսերը: Աղվանից կաթողիկոսը հայ էր, ինքը, հայերենից բացի, այլ լեզու չգիտեր, գրում էր հայերեն: Աղվանից եկեղեցին եղել է Հայ եկեղեցու քույրը, եւ նրա գաղափարաբանությունը, ծիսակարգը նույնական էին Հայ եկեղեցու հետ, ինչպես եւ Վրաց եկեղեցին՝ մինչեւ 7-րդ դարի սկիզբը, երբ բաժանվել է: Այս ամենը հատուկ շեշտադրված չէ: Ադրբեջանցիները որ ասում են՝ Աղվանից, իրականում մենք գործ ունենք հայերի հետ, որոնք Աղվանից եկեղեցու մեջ էին, բայց իրենք են ստեղծել, իրենց ճարտարապետությունն է: Երբեմն քաղաքական զանազան փոփոխությունների արդյունքում Արցախի իշխանները հանդես են գալիս Աղվանից եկեղեցու անունից, այդ եկեղեցու հետ միասին կամ այդ եկեղեցին իրենց թեւի տակ առնելով: Ադրբեջանը սա է օգտագործում: Ես քանի անգամ դիմել եմ մեր իշխանությանը՝ ասելով, որ այդ խնդիրը հայագիտության մեջ մինչեւ վերջ լուծված չէ, հարկավոր են տեսական հետազոտություններ, հիմնարար մի բան, որպեսզի կարողանանք հասկանալ եւ դիմակայել:

3-րդ կետը՝ ամենաբարդը 18-րդ դարի վերջի եւ 19-րդ դարի ժառանգությունն է: Անկախ ամեն ինչից, այդ ժամանակաշրջանի Արցախը մեզ ներկայանում է 97-98 տոկոս հայ բնակչությամբ: Այդ բնակչությունն ուներ հարյուրավոր գյուղեր, այդ գյուղերն ունեին իրենց եկեղեցիները, գերեզմանոցները: Եվ դրա կարկառուն ցուցիչը Շուշիի եկեղեցիներն են: Ինչպե՞ս վարվել դրանց հետ: Մտածեցին, հնարեցին եւ Շուշիի Ղազանչեցոցը ձեւափոխեցին, թե՝ սա հայկական չէ, Ռուս ուղղափառ եկեղեցի է: Ինչպե՞ս վարվել Կանաչ ժամի հետ. միակ ելքն այն էր, որ Կանաչ ժամն ուղղակի վերացրին: Փորձենք ամփոփել. Ադրբեջանը հակված է վերացնել հատկապես արցախյան 18-19-20-րդ դարերի սկզբի ժառանգությունը: Ամեն գյուղում կառուցում են ճանապարհներ եւ ճանապարհին անցկացնում են գերեզմանոցի միջով: Ամենամեծ եւ ծավալուն ժառանգությունը հենց այդ ժառանգությունն է: Իսկ 4-րդ կետը մինչքրիստոնեական ժառանգությունն է: Ասենք, երրորդ հազարամյակ կամ Ազովի քարանձավ,



դրանք ծիծաղելի է ներկայացնել հայկական կամ ադրբեջանական: Այդ տեսակետից ամենադասական հուշարձանը Տիգրանակերտն է: Այդ առումով նրանք չգիտեն ինչպես պատասխանել: Ինչո՞ւ, որովհետեւ Տիգրանակերտի պաշտպանական համակարգը դասական հելենիստական է: Տիգրանը հավաքել է Արտաշատի, Փոքր Ասիայի ճարտարապետներին, վարպետներին, տարել հասցրել է իր կայսրության հյուսիսային ծայրը եւ ասել՝ այստեղ մի քաղաք կառուցեք, որ ես կարողանամ մինչեւ Քուր գետն իմ հսկողության տակ պահել: Տիգրանակերտի ամրաշինական համակարգը մշակվել է մեր թվարկությունից առաջ երրորդ դարում, Ալեքսանդրիայում: Պիտի լիներ մի կայսր, որի ձեռքի տակ լինեին փոքրասիական ողջ ռեսուրսը, խելքը, ճարտարապետությունը, որպեսզի այդ հեռու վայրում կառուցվեր այդպիսի քաղաք: Այդ ամենը ցույց է տալիս կայսրական ուժ, ռեսուրսների հավաքում եւ քաղաքականություն: Եվ դա Տիգրան Մեծն էր: Միանշանակ է, որ Տիգրանակերտը Տիգրանի կառուցած քաղաքն է: Այդ եւ ավելի վաղ շրջանի մշակույթին հայ հետազոտողները հիանալի տիրապետում են, իսկ ադրբեջանցիները չգիտեն ինչպես վարվել այդ դեպքում: Մենք տեսանք 4 տարբեր կլաստերներ եւ 4 տարբեր քաղաքականություն: Մինչքրիստոնեական հուշարձանների դեպքում իրենք դեռ չունեն պատասխանը, հատկապես չունեն պատասխանը Տիգրանի կառուցածների վերաբերյալ:

- Միայն հետազոտողնե՞րի, գիտնականնե՞րի խնդիրն է դարձել՝ ապացուցել եւ տեր կանգնել օտարի կողմից ոչնչացվող մեր մշակութային ժառանգությանը:

- Երբ մենք ասում ենք, որ Ադրբեջանը վանդալ է, դա շատ քիչ է, շատ անճշգրիտ է, բայց մեր մեթոդաբանությունն այդպիսին է: Իսկ մենք՝ գիտնականներս, ոչ թե պրոպագանդա ենք անում, այլ փորձում ենք հասկանալ Ադրբեջանի մշակութային քաղաքականությունը, որը պետականորեն մշակված է՝ ի տարբերություն Հայաստանի: Հայաստանում կա միայն եւ միայն խուսափողական մոտեցում: Ասենք, եթե Համլետ Պետրոսյանը, Լեռնիկ Հովհաննիսյանը, Արտակ Բեգլարյանը եւ մյուսները, որոնք պաշտոն չունեն, պետություն չեն ներկայացնում, այս ջանքերը չթափեն, կստացվի, որ մենք ընդհանրապես լուռ ենք: Իսկ դա բացարձակապես անմարդկային է, անընդունելի, որովհետեւ այդքան խոսում ենք խաղաղության մասին, բայց մի անգամ չեղավ, որ այդ ամենի մեջ քննարկվի մշակութային ժառանգության խնդիրը: Մշակույթն ի՞նչ կապ ունի, որ իրար ուտում եք, կռվում եք, մեկը հաղթում է, մեկը պարտվում է, բայց կարելի է, չէ՞, մշակույթը չեզոք համարել, մտածել այդ մասին եւ ինչոր կետեր ընդունել: Ընդհակառակը, Հայաստանի իշխանությունները որոշեցին, որ մենք իրավունք չունենք «Արցախ» ասելու: Սա ի՞նչ աբսուրդ է: Մի քանի անգամ ինձ էլ են ակնարկել, որ լավ կլինի կայքում ձեր խմբի «Արցախ» անունը գրեք «Լեռնային Ղարաբաղ»:

- Մենք, որպես պետություն, ի՞նչ պետք է անենք: Հանձնեցինք, մշակույթից ի՞ել ենք հրաժարվում:

- Պետությունը պետք է անի այն, ինչ այսօր լծված անում է Ադրբեջանը: Այսինքն, պիտի տեր կանգնի իր մշակութային ժառանգությանը՝ օգտագործելով հումանիստական մոտեցումները, չեզոք հետազոտությունները, մանրամասնելով արցախյան մշակույթը, քննադատելով Ադրբեջանի քաղաքականությունը՝ այդ մշակույթը վերափոխելու, վերանվանելու, ոչնչացնելու, սեփականացնելու բոլոր մոտեցումները, որովհետեւ դա ռազմական, քաղաքական խնդիր չէ, դա մշակույթի խնդիր է, ինչը չեն անում Հայաստանի իշխանությունները: Կարծես ես 19-րդ դարի հետազոտող լինեմ, այդ ամբողջ բեռն իմ եւ մի քանի մարդու ուսերին է դրված, որն անարդար է:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԶԻՀԱԴԻՑ ՀԵՌՈՒ...

Ի՞նչ տեղի կունենար Հայաստանում, եթե, այսպես կոչված, TRIPP-ում արդեն իսկ տեղակայված լիներ ամերիկյան «կիսառազմականացված» մասնավոր ընկերությունը: Հազիվ թե Իրանը դա դիտարկեր որպես Հայաստանում տեղակայված ամերիկյան ռազմաբազա, բայց, ամեն դեպքում, մեկ-երկու հրթիռ կարձակեր՝ նախապես ներողություն խնդրելով բարեկամ հայ ժողովրդից: Ուրեմն եկեք փառք տանք Աստծուն, որ ՀՀ իշխանությունները չէին որոշում՝ երբ հրավիրել ամերիկյան կիսառազմականացված ստորաբաժանումը՝ TRIPP-ի վրա պարեկություն անելու: Այո, թուղթ է՝ ստորագրել են Վաշինգտոնում, բայց այդ թղթում ոչինչ գրված չէ ժամկետների մասին: Ալիեւն էլ նախապես էր ապահովագրել իր երկրի անվտանգությունը եւ իր տարածքում TRIPP-ի համապատասխան հատվածների կառուցումը վերցրել իր վրա: Որոշ բաներ էլ, իհարկե, կառուցել են, բայց ամերիկյան կողմին արված հրավերը, թե՝ արի, տիրություն արա «կորիդորին», ինչել է Հայաստանից: Հիշո՞ւմ եք, թե ով այդ գործն արտապատվիրակեց ամերիկյան մասնավոր ընկերությանը: Եվ, ուրեմն, փառք տանք Աստծուն, որ ամերիկյան կողմը չհասցրեց մինչեւ Իրանի դեմ այս պատերազմը գործարկել TRIPP-ը: Սյունիքում մենք ունեինք հակաօդային պաշտպանության այնպիսի միջոցներ, որ իրանական հրթիռների դեմն առնեինք: Պապիկյանը գնացել, Հնդկաստանից մի քանի հատ պարսատիկ է գնել, որոնցով ուզում են Հայաստանը չգիտես ումից պաշտպանել: Ադրբեջանի ու Թուրքիայի հետ «հավերժական» խաղաղություն է: Այնտեղ մնացին Վրաստանը, Իրանը եւ Ռուսաստանը, որոնք չեն հարձակվի Հայաստանի վրա, եթե համը չհանեք: Եվ, ուրեմն, պարոն Պապիկյան, ինչո՞ւ ես մսխել պետական փողը, ինչո՞ւ ես այդ փողը մտցնում բանակի էն տեղը, որը չի կռվելու եւ ոչ մի պարագայում:

Որպեսզի չստացվի, որ ռազմական գաղտնիքներ եմ հրապարակում, նշեմ նաեւ, որ հակաօդային պաշտպանություն մենք, այնուամենայնիվ, ունենք: Մեր վարչապետի անունը միայն բավական է, որ Հայաստանի թշնամիներն ահից սսկվեն տեղները: Ի՜նչ անօդաչու սարք, ի՜նչ բալիստիկ հրթիռ կգա Հայաստանի վրա, երբ Հայաստանի վարչապետն է իր քաջարի թիմով «սանրում» երկրի գյուղերն ու քաղաքները: Թող փորձեն հանկարծ գալ մեզ վրա... Իրանը, Արաբական թերակղզին, Իսրայելը, Աֆղանստանը, Պակիստանը, Հնդկաստանը՝ կրակնեռի մեջ, ինքը «պերաշկի» է կրծում ավտոբուսում ու կատակում ՔՊ-ի թեթեւսոլիկ մեծամեծների հետ... Յանի՝ «էս ամեն ինչն իմ տանձին չի»: Ասում են՝ երբ Մակրոնին ցույց են տվել սրանց «պերաշկիով» կադրերը, իսկույն դուրս է եկել մահճակալի տակից ու սկսել «դուխով» հայտարարություններ անել Իրանի դեմ, թե՝ հանկարծ չհարվածեք մեր գործընկերների ռազմաբազաներին: Տո այ Մակրոն, ինչո՞ւ որեւէ հայտարարություն չարիր, երբ ամերիկա-իսրայելական հրթիռները Թեհրանում հարվածեցին դպրոցին՝ խլելով հարյուրավոր երեխաների կյանքեր: Հիմա տեսել ես ՀՀ վարչապետի «պերաշկիով» կադրերն ու քաջությունն ես խաղում: Իսկական քաջը մեր վարչապետն է: Մի տես, թե ոնց է մտնում մարդկանց խանութներն ու տները, ոնց է գոռգոռում քաղաքացիների վրա... Պատերին կտա բոլորին, հասկանում ես, ով իրեն ասի՝ աչքիդ վերեւն ունք կա: Այո, պատահում է՝ խանութ չեն թողնում, տան դուռը չեն բացում նրա առաջ, բայց մի՞թե նման բաները կարող են ընկճել ՀՀ վարչապետին, որ որոշել է արհամարհել հարեւան երկրի դեմ սանձազերծված պատերազմը:

Խոսակցություններ կան նաեւ այն մասին, որ Էրդողանն ու Ալիեւը քիչ է մնացել ծիծաղից ուշաթափվեն, երբ տեսել են, թե ինչպես են ՀՀ վարչապետն ու ԱԺ նախագահը «պերաշկի խեղդում» Իրանում պայթող ամերիկա-իսրայելական հրթիռների տարափի տակ: Ալիեւն իբր ասել է՝ սրանց «երկրորդ հարկի հետ» մի բան այն չէ, բայց Էրդողանը սաստել է նրան, թե՝ դրա ժամանակը չէ, քանի այս պատերազմը չի դադարել, պետք է բուֆերային գոտի ստեղծել Իրանի հյուսիսում: Կասենք՝ դա արվում է հանուն Թուրքիայի անվտանգության, ինչպես Սիրիայում արեցինք: TRIPP-ը կլայնացնենք, ավելի շատ ամերիկացի զինյալներ կբերենք, արեւմտյան Ադրբեջանը կշինենք, ու... Քեֆ արա, Իլհամ ջան... Եվ ո՞վ կարող է Էրդողանին ու Ալիեւին կանգնեցնել: Բոլորն զբաղված են... Սա ՀԱՊԿ-ի գործը չէ, Եվրոպան մտել է մահճակալի տակ, Ռուսաստանը խրված է Ուկրաինայում, իսկ ՀՀ վարչապետը քարոզարշավի է: Մտել է մի կնոջ տուն ու փոխանակ հետաքրքրվի նրա առողջությամբ, հարցնում է՝ տանը մարդ չկա՞... Չասե՞մ հիմա՝ քո ի՞նչ գործն է, դու եկել ես վերելակի հարցո՞վ զբաղվելու, թե՞ տիկնոջն այդպիսի անհարմար հարցեր տալու: Հասկացանք, «տանձիդ չէ» մեր դռանը տեղի ունեցող պատերազմը, բայց մ՚դ աստիճանի:

ՀԳ. *Ասում են՝ ԱՄՆ փոխնախագահ Վենսը տեսել է մերոնց ուրախ ավտոբուսի կադրերն ու ընկել մտածմունքի մեջ՝ էն փողը տա՞ն, չտա՞ն... Պատերազմը կարող է երկարել ու հավելյալ ծախսեր պահանջել: Այսօր այդ փողը տան Հայաստանին, որ ի՞նչ անեն: Որոշել է այս երկու օրը մտնել Թրամփի մոտ ու նորից քննարկել հարցը: Բայց Վենսն ի՞նչ իմանա, թե ինչ կգա իր գլխին, եթե ՀՀ վարչապետը «պերաշկին» կուլ տալուց հետո մատների յուղը սրբի ու անձամբ Թրամփին զանգի, որ սա 9 միլիարդը ոչ թե մաս-մաս տա, այլ միանգամից՝ TRIPP-ի ուշացման հետ կապված տույժ-տուգանքն էլ հետը:*

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 3.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՌԴ-Ի՝ ՉԳՆԱԼՈՒ ԵՎ ԱՄՆ-Ի՝ ԳԱԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամերիկայի ու Իսրայելի կողմից Իրանին, իսկ Իրանի կողմից Իսրայելին ու ամերիկյան ռազմաբազաներին հասցված հարվածներից հետո, տարածաշրջանում ձեւավորված նոր աշխարհաքաղաքական իրողություններն եկան եւս մեկ անգամ ապացուցելու, որ այս երկրի արտաքին քաղաքականության խնդիրը ոչ թե Ռուսաստանի ու Ամերիկայի միջեւ ընտրություն անելը կամ թե նրանց հետ «եւ-եւ»-ի տրամաբանությամբ հարաբերություն ստեղծելը, այլ Հայաստանին նրանցից հավասար հեռավորության վրա պահելն է:

Այս իմաստով, ուզում ենք հավատալ, որ Ամերիկայի ու Իսրայելի կողմից ձեւավորվող այս նոր տարածաշրջանն ու նրա ճարտարապետության տրամաբանությունը ոչ միայն Հայաստանի օրվա իշխանություններին, այլ նաեւ Հայաստանի արեւմտամետներին ու ռուսամետներին կօգնի, որպեսզի նրանք հասկանան, որ Հայաստանի արտաքին քաղաքականության խնդիրը ո՛չ տարածաշրջանից Ռուսաստանի հեռանալն է, եւ տարածաշրջան Ամերիկայի գալը եւ ո՛չ էլ տարածաշրջանում Ռուսաստանի մնալը եւ Ամերիկայի՝ տարածաշրջան չգալը:

Այս առումով, Հայաստանի արտաքին քաղաքականության խնդիրը ոչ թե տարածաշրջանում Ռուսաստանի մնալը, այլ տարածաշրջանում Ռուսաստանի մնալուց Հայաստանի համար եղած առավելությունների իրացումն է, այնպես, ինչպես Հայաստանի արտաքին քաղաքականության խնդիրը, ոչ թե տարածաշրջան Ամերիկայի չգալը, այլ նրա գալուց հետո Հայաստանի համար ստեղծվող հնարավորությունների կապիտալիզացումն է:

Մենք, այս իմաստով, վերջապես մի օր պետք է հասկանանք, որ Հայաստանում ու Հայաստանի շուրջ ձեւավորված այսօրվա հարաբերական անդորրը ոչ թե Ամերիկային տարածաշրջան բերելու համար Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղող գործընթացի մաս դառնալու, ոչ թե Ռուսաստանին տարածաշրջանում պահելու համար տարածաշրջան Ամերիկայի գալուն խոչընդոտելու, այլ ճիշտ հակառակը՝ դրանցից եւ ոչ մեկի մասը չդառնալու, դրանցից եւ ոչ մեկին չաջակցելու արդյունք է:

Նաեւ պիտի հասկանանք, որ եթե մեր արտաքին քաղաքականությամբ մենք այսօր ինչ-որ հաջողություն էլ արձանագրել ենք, ապա ոչ այն պատճառով, որ Ռուսաստանը տարածաշրջանից գնացել է, իսկ Ամերիկան էլ տարածաշրջան է եկել, եւ ոչ էլ այն, որ Ռուսաստանը տարածաշրջանում մնացել է, իսկ Ամերիկան տարածաշրջան չի էլ եկել, այլ որովհետեւ ո՛չ Ռուսաստանն է տարածաշրջանից գնացել եւ ո՛չ էլ Ամերիկայի՝ տարածաշրջան գալն է խոչընդոտվել:

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ բացասական հետեւանքներ կլինեն Հայաստանի համար

Кавказское обозрение տելեգրամյան ալիքն անդրադարձել է Իրանի դեմ ամերիկա-իսրայելական հարձակմանն ու հատկապես այն հարցին, թե Հայաստանի համար այդ հարձակումն ինչ բացասական հետեւանքներ կարող է ունենալ: Այսպես, ըստ հոդվածի.

• կարճաժամկետ հարձակումն Իրանի վրա, որը կարող է տեւել մի քանի շաբաթ, կարող է հարկադրել Իրանին՝ շարունակելու բանակցությունները կամ կապիտուլացվել: Չի բացառվում նաեւ, որ տեղի ունենա վարչակարգի փոփոխություն, ըստ «հարավսլավական սցենարի»:

• Ավելի տեւական ռմբահարումները եւ էթնիկ ու քաղաքական հակամարտության հրահրումն Իրանի տարածքում, ըստ «լիբիական սցենարի», կարող է բերել Իրանում իրավիճակի ապակայունացման

• իսկ եթե հարվածներն ընթանան «սիրիական սցենարով», ապա դա կարող է հանգեցնել Իրանի փաստացի մասնատմանը:

Այս ամենը, ըստ հոդվածի, չափազանց վտանգավոր կարող է լինել Հայաստանի համար, քանի որ Իրանից դեպի Հայաստան կլինի փախստականների մեծ հոսք: Իրանից Ադրբեջան փախստականների մեծ հոսք կլինի, որն առիթ կտա, որ Ալիեւը դարձյալ պահանջի, որ 300 հազար ադրբեջանցիները վերադառնան Հայաստան: Հնարավոր է նաեւ, որ փախստականների հոսքի հետ ինքնաբուխ կամ կազմակերպված ձեւով ներթափանցում իրականացվի Հայաստանի Սյունիքի մարզ, որտեղ հաստատվի անվտանգության գոտի՝ թուրքական կամ ադրբեջանական ռազմական ուժի հսկողությամբ: Տարբեր փորձագետներ այս ամենի մասին խոսել են տարիներ շարունակ: Ու հիմա Իրանում պատերազմը կարծես թե կարող է նաեւ արձակել Ադրբեջանի ձեռքերը: Թեեւ Հայաստանն ամեն կերպ ձգտում է պահպանել չեզոքություն, սակայն բացառված չէ, որ ինչ-որ փուլից ստիպված լինի ներքաշվել ռեգիոնալ այս նոր հակամարտության մեջ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am